№ 186 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 26 ՕԳՈՍՏՈՍԻ
1909
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 26 ՕԳՈՍՏՈՍԻ № 186
ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տպարանի տելեֆոն № 228.

ՄՇԱԿ
(37-ՐԴ ՏԱՐԻ)

Սեպտեմբերի 1-ից մինչև տարվայ վերջը 4 րուբլի։

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԿՈՉ

Թիւրքաց Հայաստանի հայ աղէտեալներին օգնող ՀԱՆԳԱՆԱԿԻՉ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԸ, վերսկսելով իր գործունէութիւնը, Կայսերական Բարձր կառավարութիւնից ստացած թոյլտուութեան համաձայն, սրանով կոչ է անում Կայսրութեան բոլոր հայ ազգաբնակութեանը՝ փութալ օգնութեան ձեռք կարկառել Թիւրքաց Հայաստանի տառապեալ և աղէտեալ հայ ժողովրդին, մանաւանդ Ադանայի սոսկալի ջարդերից յետոյ անօգնական, անտէր մնացած թշուառ որբերին։

Անօրինակ է պատմութեան մէջ և սոսկալի այն աղէտը, որին ենթարկվեց Ադանայի և շրջակայքի հայ ժողովուրդը։ Եւս առաւել ուրեմն բարոյական ահագին պարտականութիւն է ընկնում Ռուսաստանի և այլ տեղերի հայ ժողովրդի վրա փութալ ամոքել դառն վշտերը, սրբել աղի արտասուքները և փրկել անտէր, անօգնական մնացած որբերին։

Նուէրները պէտք է ուղարկել Հանգանակիչ Մասնաժողովի անդամ-գանձապահ Առաքել Սարուխանեանին այս հասցէով. Тифлисъ, Контора А. И. Манташева и Ко, Аракелу Саруханяну. Tiflis, ociété Mantacheff et. C-ie, A. Saroukhan. (չ. շ.) ա. 595. 10—9

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
ՎԱՌ. ՍՄԲԱՏԵԱՆՑԻ

Պատրաստվում են երկսեռ աշակերտներ բոլոր միջնակարգ (և Ներսիսեան, Յովնանեան, Գայեանեան) դպրոցներ ընդունվելու։ Աւանդվում են նաև ֆրանսերէն, գերմաներէն. ձեռագործ (կերտուածք, դաղում և կողովագործութիւն) և մարմնարզութիւն։ Ընտանիքիս մէջ միասին ապրելու կայ 2 աշակերտի տեղ։ Ընդունելութիւնը սկսված է։ Սօլօլակ, փող. Պասկևիչի, № 13.
(շ. կ. չ. ու.) ա. 819. 6—3

ՄԵՐ ԵՐԿՐԻ ՄԱՍԵՐԸ

Արևելեան Կովկասի միացման կամ Գունիբի առման յիսնամեակը առիթ տուեց խօսելու լեռնային այն մեծ երկրի մասին, որ Դաղստան անունն է կրում։

Շատ շատերի համար անծանօթ և բոլորովին անյայտ հանդիսացան մեր երկրի այդ մեծ զանգուածի ժողովուրդը, սովորութիւնները, լեզուն, տնտեսութիւնը և կեանքի արտայայտութիւնները։

Դա զարմանալի պէտք է թւար ուրիշ երկրներում, որովհետև մարդիկ աշխատում են միշտ տեղեկութիւն ունենալ իրանց բնակած երկրի աշխարհագրութեան, ժողովրդագրութեան և պատմութեան հետ և ուրեմն գաղափար ունենալ իրանց հարևանների կենցաղի մասին։

Բայց մենք շատ էլ չենք զարմանում այդ բանի վրա, որովհետև ամեն օր մեր առաջ հանդէս են եկնում բազմաթիւ դէպքեր, որոնք ցոյց են տալիս, որ մենք չենք ճանաչում այն մերձաւոր շրջանը, որտեղ մենք ապրում ենք, այն ազգութիւնը, որին պատկանում ենք, այն ժողովուրդը, որի մէջ մենք օր օրի վրա գործում ենք։

Եւ ուրեմն, հասկանալի է, որ մենք [illegible] մանափակ գաղափար կունենանք մեր հարևանների մասին, մանաւանդ այնպիսի հարևանների, ինչպէս են Դաղստանի լեռնականները, որոնք դարեր շարունակ ապրել են մեզնից անջատ կեանքով։

Անշուշտ՝ մեծ դժբաղդութիւն է մի երկրի համար, երբ նրա մէջ ապրող ժողովրդական համախմբումները ծանօթ չեն միմեանց և քաջ կերպով չեն ճանաչում իրանց բնակած երկիրը։ Այդպիսի ագիտութիւնը և անտեղեակութիւնը միշտ լցված և անկար վիճակի մէջ կը պահեն ժողովրդական զարգացումը և ճգնաժամային րօպէներում աղէտներ կը բերեն երկրի գլխին, անսպասելի աղէտներ, որոնք կը լինեն այնքան աւելի ծանր և հոգեմաշ, որքան մեծ կը լինեն անտեղեակութիւնից առաջացած թիւրիմացութիւնները։

Եթէ մեր կեանքը, մեր կրթութիւնը, մեր իրականութեան պայմանները մինչև այժմ յարմարութիւն չեն ընծայել մեզ ծանօթանալու մեր երկրի և նրա ժողովուրդների հետ, պէտք է այսուհետև հոգ տանենք այդ մեծ պակասութեան առաջն առնելու և յամենայն դէպս պէտք է օգտվենք գոնէ յարմար առիթներից ընդարձակելու մեր ծանօթութիւնը մեր երկրի և նրա ազգաբնակութեան մասին։

Արևելեան Կովկասի միացման ներկայ յիսնամեակը թող ծառայէ իբրև այդպիսի առիթներից մէկը տարածելու մեր հասարակութեան մէջ ճշգրիտ տեղեկութիւններ Դաղստանի և նրա մէջ ապրող լեռնականների կեանքի մասին մի շարք դասախօսութիւններով, գրքերով, պատկերահանդէսներով, մշակված յօդուածներով և ճանապարհորդական նկարագրութիւններով։

Ընդառաջ գնալով այդ անհրաժեշտ պահանջին, մենք տալիս ենք մի քանի տեղեկութիւններ մեր երկրի այդ հետաքրքրական և ուսանելի տարածութեան մասին և կը ցանկանայինք, որ հասարակութեանը տրվէին և այլ միջոցներ ընդարձակելու իր գիտութիւնը մեր եղբայրակից և համաքաղաքացի լեռնական ժողովրդի մասին։

Ա. Քալանթար

ԳՈՒՆԻԲԵԱՆ ՀԱՆԴԻՍՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Գունիբ, 24 օգոստոսի

Ժամանեց Կովկասի Փոխարքան։ Դիմաւորեց պլաստունեան բատալիոնի պատուաւոր պահակախումբը։ Բերդը գեղեցիկ կերպով լուսաւորված է։ Գունիբի և հարևան լեռների կատարներին վառվում են խարոյկներ և լապտերիկներ։ Փոխարքան ընդունեց պահակա[illegible] վարչի տունը, ուր ընդունում էր ազգաբնակութեան պատգամաւորութիւններին և քաղաքացիական վարչութեան պաշտօնեաներին։ (Հ. Գ.)

—

Բագու, 24 օգոստոսի

Արևելեան Կովկասի գրաւման 50-ամեայ յօբելեանի օրը յաւերժացնելու համար Կովկասի Փոխարքայի կարգադրութեամբ քաղաքապետը ադմինիստրատիվ տուգանքներից ազատեց նրանց, որոնք ձերբակալված էին երկու շաբաթ ժամանակով և տուգանքի էին ենթարկված մինչև 50 ր. պարտադիր որոշումները խախտելու համար։ (Հ. Գ.)

—

Արևելեան Կովկասի գրաւման 50-ամեայ յօբելեանի օրը յաւերժացնելու համար Թիֆլիսի ժամանակաւոր գեներալ-նահանգապետը կարգադրեց. 1) ազատել վճարից այն մարդկանց, որոնք 25 և աւելի պակաս րուբլով տուգանքի էին ենթարկված պարտադիր որոշումները խախտելու համար, և որոնք այդ տուգանքները չէին վճարել մինչև օգոստոսի 25-ը. 2) վերացնել նոյն բանի համար որոշված բանտարկութիւնները, որոնք 2 շաբաթից չեն անցնում. 3) օգոստոսի 25-ի առաւօտեան ազատել բանտարկութիւնից նրանց, որոնց մինչև օգոստոսի 25-ը մնացել էր երկու շաբաթ բանտարկութիւն և աւելի պակաս, իսկ մնացած ոստիկանական հսկողութեան տակ գտնվողներին պակասեցնել բանտարկութեան ժամանակամիջոցը երկու շաբաթով։

—

Երէկ Թիֆլիսում Արևելեան Կովկասի գրաւման 50-ամեայ յօբելեանը կատարվեց առանձին շքեղութեամբ։ Վաղ առաւօտից քաղաքի տների պատշգամբները զարդարված էին դրօշակներով և գոյնզգոյն լապտերներով։ Աշխատանքներ չը կային զինուորական հաստատութիւնների մէջ։ Ցերեկվայ ժամը 12-ին, զինուորական մայր տաճարում պատարագից յետոյ կատարվեց գոհաբանական մաղթանք։ Մաղթանքին ներկայ էին Կովկասի Փոխարքայի պաշտօնակատար գեներալ Շատիլով, Փոխարքայի քաղաքացիական մասի օգնական սենատոր Միցկևիչը, գեներալիտետը, զինուորական և քաղաքացիական նահանգապետները և այլ պաշտօնական անձեր։ Ներկայ էին նաև բոլոր համքարներն իրանց դրօշակներով, կրթական հաստատութիւնների սաներ, բոլոր զօրամասերից պատգամաւորութիւններ և քաղաքացիական հաստատութիւնների ներկայացուցիչները։ Մաղթանքից յետոյ տաճարի ընդարձակ բակում տեղի ունեցաւ հանդիսաւոր քայլերթ (маршъ), որի ժամանակ Փոխարքայի պաշտօնակատար գեն. Շատիլօֆը անցաւ զօրքերի շարքերով և սահմանված բարևներից յետոյ կարդաց Փոխարքայի հրամանը։ Ընթերցումից յետոյ [illegible] Կայսեր և Փոխարքայի անունների վրա օդը թնդացրին բարձրաձայն «ուռաներով»։ Երեկոյեան քաղաքը հրավառված էր։ Ժամը 8-ին Արքունական թատրոնում կայացաւ հանդիսաւոր ներկայացում 5 լեզուներով և կոնցերտային բաժանմունքով, մասնակցութեամբ օպերային արտիստների։ Մաղթանք կատարվեց Վանքի մայր եկեղեցում հայոց հոգևորականութեան մասնակցութեամբ, որին ներկայ էին և հայոց դպրոցների սաները։

ԿՈՎԿ. ԶՈՐԱԲԱՆԱԿՆԵՐԻ ԸՆԴՀ.-ՀՐԱՄԱՆԱՏԱՐ
ԿՈՄՍ Ի. Ի. ՎՈՐՈՆՑՈՎ-ԴԱՇԿՈՎԻ ՀՐԱՄԱՆԸ

Արև.-Կովկասի գրաւման 50-ամեայ յօբելեանի առիթով

—

Կովկասեան քաջարի զօրքեր.

Շնորհաւորում եմ ձեզ Գունիբը վերցնելու 50-ամեայ յօբելեանի նշանակալից օրը, որ վերջ դրեց երկարատև կովկասեան պատերազմին և հանգստութիւն մտցրեց Չէչենի և Դաղստանի ժողովուրդների մէջ։ Ոչ թէ աշխարհակալի ուսերից սրով, այլ խաղաղութեան հոգևոր բարիքով, կեանքի հանգստեան, ժողովուրդների բարգաւաճման և զարգացման ձիթենու ճիւղով ոտք դրին ռուսաց զօրքերը անմատչելի լեռների կիրճերը, դարաւոր խիտ անտառների խորքը։ Անհամար զոհեր արժեցին այդ պատերազմները ռուսաց պետութեան, սակայն իրանց պատմական միսիոնային հաւատարիմ մեր զօրքերը յամառ և տոկուն ընթացան դէպի ընդգծված նպատակը, և վերջապէս 1859 թւի օգոստոսի 25-ին ընկաւ Գունիբը՝ կովկասեան վերջին իմամ Շամիլի վերջին պատուարը։

Այնպիսի պատերազմը, ինչպիսին է կովկասեանը, երկարատև, արիւնահեղ, հերոսական մի պատերազմ, անօրինակելի պատմութեան մէջ,—չէր կարող վերջացնել մի սերունդ, և յետագայ սերունդները ևս մասնակցեցին նրան. հէնց այդտեղից էլ զարգացան կովկասեան հինաւուրց զինուորի այն առանձնայատկութիւնները, որ անսահման քաջութեամբ և իր պարտականութիւնը սրբութեամբ կատարելու մէջ նմանը չունի ամբողջ աշխարհում։

Կովկասեան զինուորը իր անխորտակելի հզօրութիւնը քաղել է լոկ իր միջից, իր բարոյական ոյժի մէջ, այլ ոչ թէ որոնել է նրան թշնամու թւի, ևս առաւել նիւթական գերակշռութեան մէջ։ Յաղթելու և մեռնելու ընտրութիւն նա չէ ունեցել. իսկ եթէ թշնամու ոյժը գերազանցել է շատ անգամ, նա անտրտունջ, իր նախահայրերի պատգամի համաձայն, խոնարհեցնում էր գլուխը, յիշատակ թողնելով սերունդին մի անուն, որը չը պէտք է մոռանանք մենք, մեր հայրերի և պապերի փառքի ժառանգորդներս։ Այս հո[illegible] համակված էին ոչ միայն առանձին զինուորներ, այլ ամբողջ կովկասեան զօրքերը։ Հազարաւոր օրինակներ կան, երբ պառկում էին ամբողջ զօրամասեր, չը զիջելով թշնամուն և ոչ մի քայլ, և որոնցով լի են կովկասեան մեր գնդերի պատմութիւնները։

Կէս դար արդէն անցել է այն օրից, երբ Դաղստանի լեռներում որոտաց վերջին գնդակը, և մենք, տօնելով այսօր այդ օրը, պատկառանքով յիշենք ընկած հերոսներին, որոնք սերունդից սերունդ կատարեցին մեծ գործ և իրանց անձնուէր հաւատարմութիւնը Կայսրին և հայրենիքին հաստատեցին իրանց արիւնով և կեանքով։ Յիշենք այժմ իսկ նաև մեր արի զօրականներին, որոնք շրջապատված են պանծալի փառքով և որոնց գլուխ կանգնած է ֆելդմարշալ իշխան Բարեատինսկին, որ կովկասեան պատերազմը պսակեց անմահ քաջագործու-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴԷՊԻ ԳՈՒՆԻԲ*)

—

Խաղաղ գիշեր էր։

Խօջալմախին իր օրվայ աշխատանքից յետոյ հանգիստ քնի մէջ մտաւ։

Դուրսը մութն էր և հրաւիրում էր ինձ ևս թողնել դիտողութիւնները և հանգստանալ։

Բայց կայարանի սենեակը շատ անհիւրընկալ էր։ Օդը խեղդուկ էր և ծանր։ Յոգնածութիւնից շատ շուտ քնեցի. բայց մի քանի ժամանակից յետոյ արթնացայ մլուկների գոռ արշաւանքից։

Ժամը 12-ն էր գիշերվայ։ Ես դուրս ելայ սենեակից։ Լուսինը նոր էր ծագում և հանդարտ սողում էր բարձր լեռան ետևից։ Գեղեցիկ էր տեսարանը։ Ես մոռացայ կայարանի սենեակը և նրա փոքրիկ պատուհաններին։ Չորս կողմը տիրում էր լռութիւն։

— Դուք քնած չէ՞ք,—լսվեց մի ձայն։

Դա կառապաններից մէկն էր, որ նոր էր վերադարձել ճանապարհից և պատրաստվում էր քնելու։

— Շատ խաղաղ է այս գիւղում,—նկատեցի ես.—ի միջի այլոց ամբողջ երեկոյ ոչ մի շան հաչոց չը լսեցի այստեղ։

— Այստեղ շուն չեն պահում,—պատասխանեց նա։

Գիշերվայ զովը կուլ տալուց և փոքր ինչ ցուրտ զգալուց յետոյ նորից գնացի սենեակ և քնեցի մինչև ժամը երեքը։ Նորից դուրս եկայ։

Արդէն սկսվում էր առաւօտեան կեանքը։ Մի քանի սայլեր կանանց ղեկավարութեամբ գնում էին ճանապարհով։ Կանայք ուրախ-ուրախ զրուցում էին։

Մի քանի ժամանակից յետոյ սկսվեցին և միւս աշխատանքները։

Վառվեցին թոնիրները և սկսեցին հաց թխել։

— Այստեղ մեծ մասամբ ուտում են սիմինդրի հաց,—բացատրում էին ինձ.—սիմինդրի խմորը բաւական մածուցիկ է, չէ թափվում և լաւ թխվում է։

Նոր պատրաստած հացը հաճութեամբ ուտվում է։

Սիմինդրի հատիկը բաժանում են հասկաբարձից՝ թափ տալով փայտի հարուածներով։ Մի ձեռքով պահում են հասկաբարձը, միւս ձեռքով հարուածում նրան։ Յետոյ չորացնում են հատիկները և աղում ջաղացներում։

Ես այցելեցի մի գիւղական տուն։ Մեծ սենեակի մէջտեղում կանգնեցված էր մի սիւն, որ ամրութիւն էր տալիս տանը։ Սենեակի պատերից կախված էին մետաղեայ ամաններ։

Դիտեցինք գործված շալը։ Բաւական նուրբ գործ էր։ Գնահատում էին 30 րուբլի։ Պատմում էին, որ մի տարի առաջ մի ուրիշ շալ ծախել են 50 րուբլով։

Շտապեցի դէպի կայարան՝ շարունակելու ճանապարհս։

Մեր մօտով անցաւ մի վայելչակազմ երիտասարդ մայր, որ տանում էր օրօրոցը՝ նրա միջի երեխայի հետ անուշ զրուցելով և քաղցր ժպիտներով իր մայրական սէրը և փաղաքշանքը արտայայտելով։

Կայարանում սպասում էր ինձ ուղեկիցս։ Կառքը պատրաստ էր դէպի Գունիբ տանելու մեզ։

Սկզբում մենք դեռ ևս գտնվում էինք Խօջալմախիի այգիների շրջանում։

— Տեսէք, որքան պտղառատ են ծառերը,—բացագանչում էր յաճախ ուղեկիցս։

Արդարև, խնձորենիները գործում էին խաղողի վազերի տպաւորութիւն, որոնց ողկոյզների փոխարէն կախված էին խնձորի կուտակումներ։ Ամբողջ ծառերը կարմիր էին երևում պտուղների գոյնից։

Ծառերից շատերը ունէին յենարաններ փայտեայ ձողերից։ Առանց այդ ձողերի՝ ծառերի ճիւղերը յաճախ կոտրատվում են պտուղների ծանրութիւնից։

— Նայեցէք այստեղ. արտերը բաժանված են միմեանցից ծառերի կանոնաւոր շարքերով։ Դա թէ ցանկապատ է և թէ տեղի տնտեսումն։

Այսպէս՝ ուղեկիցս և ես հաղորդում էինք միմեանց մեր տպաւորութիւնները։

Վերջացան Խօջալմախիի այգիները։ Փոխվեցին և մեր տպաւորութիւնները։

Սկսվեց վերելքը։

Ճանապարհին տեղ տեղ պատահում էին մանուկներ, որոնք վազում էին մեր կառքերին ընդառաջ, պարում էին, բացագանչութիւններ անում և փող խնդրում։

Այդպէս սովորեցրել են նրանց ճանապարհորդները, զինուորականները։

Բարձրացանք մինչև Կօլլինի լեռնամէջքը և անցանք միւս կողմը։

Ահա և Գէօրգիևսկի կամուրջը, նեղ ձորանցքը, լեռնալանջի կողքով տարած խճուղու կեռմանները…

— Ահա Գունիբը,—յայտնեց կառապանը։

Մենք վաղուց էինք նրան սպասում։

Գունիբի բարձրութիւնը, որ սկզբում երևում էր մի հասարակ բարձրութիւն, քանի գնաց աւելի ու աւելի տպաւորիչ դարձաւ։

Արդարև, լինելով ինքն ըստ ինքեան մի խոշոր բարձրութիւն, Գունիբը միևնոյն ժամանակ մի այնպիսի ամրութիւն է, որպիսին հազւագիւտ է աշխարհում։

Նա անմատչելի է համարեա բոլոր կողմերից։

Համեմատաբար աւելի բաց է այն կողմից, որտեղով անցնում է խճուղին, որ այժմ կապում է Գունիբը դրսի աշխարհի հետ։

Գունիբի մի քանի խզուածքները ներկայացնում են ուղղահայեաց ժայռակազմ պատեր, որոնց վրայով անհնարին է մագլցել և որևէ ձևով բարձրանալ։

— Այն ինչ տուն է սուր քարափի գլխին,—հարցրինք մենք։

— Դա շրջանապետի բնակարանն է,—բացատրեց կառապանը։

Գունիբ բարձրանալ հեշտ չէր։ Ճիշդ է՝ մենք նստած էինք, կառքի մէջ և հանգիստ ու հանդարտ դիտում էինք միայն մեր շուրջը և շրջակայ հորիզոնները, բայց տեսնում էինք, թէ որքան պտոյտներ կամ կեռմաններ ենք անում նոյն սարանցքի շուրջը։

Գնում էինք գնում և դարձեալ լեռան կօնուսի նոյն կողագծի վրա էինք, միայն աւելի ու աւելի բարձր գօտիներն էինք անցնում։

— Ովքե՞ր են այստեղ բանջարանոցներ գցել, ու՞մ են պատկանում այս կողմերի գեղեցիկ ածուները,—հարցրինք մենք։

— Սրանք ռուսներինն են,—բացատրեց կառապանը.—նրանք բաւական օգուտ ունեն իրանց բանջարանոցից։

Եւ նա պատմեց, որ կաղամբի պահանջ կայ Գունիբում թէ զօրքի և թէ այնտեղ ապրող պաշտօնեաների և միւս բնակիչների կողմից։

Բանջարանոցներում կան և ուրիշ արմտիներ, որոնց տեսակները և քանակը տարէ-տարի աւելանում են։

Գունիբը իր շրջակայքով բոլորովին ռազմական-զինուորական բնաւորութիւն է կրում։

---

*) Տես «Մշակ» № 185.

թեամբ՝ 1859 թւին Գունիբը վերցնելով:

Բաղդաւոր եմ և ես, որ վիճակվում է ինձ կովկասեան զօրքերի գլուխը անցած տօնել պատմական մեծ դէպքի 50-ամեայ տարեդարձը: Անցեալ 50 տարիների ընթացքում կովկասեան զօրքերի շարքերում փոխվեցին մարդիկ, փոխվեցին զգեստի ձևերը, զօրքերի կազմը, բայց անխորտակելի մնացին նրանց մէջ կովկասեան հինաւուրց զօրքի ռազմիկ աւանդութիւնները և փառաւոր յիշատակները, ոգու ներքին սիւները:

Դուք ևս, կովկասեան զօրքերի արժանաւոր յաջորդներ, մնացէք անկեղծ հետևողներ ձեր պապերի և հայրերի պատգամների:

Թող կովկասեան զօրքերի անցեալը գրաւական ծառայէ նրա ապագային:

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Կ. Պօլիս, 24 օգոստոսի

Հրատարակվեցին 7 միլիօն փոխառութեան պայմանները. այս փոխառութեամբ ծածկվելու է բիւջէտային դեֆիցիտը: Տախսագինը, 89,4%-ով, հանգչելու է 1920 թւին. ապահովութիւնն են Անատոլիայի վիլայէթները: (Հ. Գ.)

Սալոնիկ, 24 օգոստոսի

Տեղի ունեցաւ յունական բազմամարդ բողոքի միտինգ կառավարութեան այն վճռի դէմ, որով գործադրվելու են պարլամենտի ընդունած վիճելի եկեղեցիների օրինագծի սոսկ երեք կէտերը: Վճռվեց խնդրել սենատին՝ թոյլ չը տալ գործադրել օրինագիծը, մինչև որ վերջինս օրէնք չը դառնայ: (Հ. Գ.)

Կ. Պօլսից ստացված լուրերը յայտնում են, որ Երիտասարդ-Թիւրքերը մտադիր են հրաժարված Գաբրիէլ էֆ. Նորատունկեանի փոխարէն յանձնել հանրային շինութեանց մինիստրի պաշտօնը օսմ. պարլամենտի հայ պատգամաւոր փաստաբան Պետրոս Հալաճեանին:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Թաւրիզ, 24 օգոստոսի

Ռուսաց զօրքերի՝ ազգաբնակութիւնից խլած զէնքերը լիովին յանձնվեցին գեներալ-նահանգապետ Մուխբիր-ուս-Սալթանէին:

Ինչպէս յայտնի է, յիշեալ զէնքերը ռուսները խլեցին ապրիլ ամսին՝ գեներալ Պետրէնկոյի [illegible] յետոյ: (Հ. Գ.)

Թեհրան, 25 օգոստոսի

Նորերս նշանակված Թիւրքական դեսպանի հանդիպումը կրում էր առանձին հանդիսաւոր բնաւորութիւն: Քաղաքից 12 վերստ հեռու ժողովվեցին բոլոր աչքի ընկնող գործիչները: Այնտեղ դրվեց մի հարիւրեակ կօզակ, նաև ներկայ էր Եփրեմը ոստիկանութեան բազմաթիւ գործակալների հետ:

Դեսպանը, շրջապատված զօրքերով և ժողովրդով, եկաւ և ներկայացաւ շահին: Պալատից դուրս գալու ժամանակ էլ օվացիաները շարունակվում էին: Դրանք աւելի բուռն կերպարանք ստացան դեսպանի ճառի ժամանակ, որ, շնորհաւորելով նոր և փայլուն գահակալը, յայտնեց, որ Թիւրքիան ևս վերջերս ծանր ժամանակներ անցրեց, որ նա հաւատում է Երիտասարդ Իրանի ապագային, որին Երիտասարդ-Թիւրքիան ընդհանուր շահերով ուրախութեամբ ձեռք է մեկնում երկու ժողովուրդների բարեկեցութեան համար:

Ղազվինի նահանգապետը փոխվեց. նա թոյլ և անհամապատասխան մարդ էր: Նրա տեղ նահանգապետ նշանակվեց Բախին-էլ-Միւլքը, որ մի խիստ, եռանդուն անձնաւորութիւն է: (Г. Л.)

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Ղօչան, 2 օգոստոսի

Տեղիս դատաւոր Սուջա-ուդ-Դօվլէն մի քանի օր առաջ ճանապարհվել է դէպի Շիրվան քաղաքը. թէ ինչ նպատակով այդ մասին առայժմ որոշ յայտնի չէ: Բայց, ինչպէս պատմում են, այդ կողմում, Թայֆայական հողի վրա, տեղական ժողովուրդը սպանել է միապետական մի պաշտօնեայի: Հաւանական է, որ հէնց այդ սպանութեան գործը քննութեան ենթարկելու համար է գնացել:

Շնորհիւ դատաւորի բացակայութեան, ընդհանրապէս տրամադրութիւնը քաղաքում խիստ յուզված է նկատվում: Եթէ դատաւորը շուտով չը վերադառնայ՝ յամառ կերպով խօսվում է բարդութիւնների և անկարգութիւնների մասին:

Քանի օր է, Մէշէդից այստեղ է եկել յեղափոխականների պարագլուխ Միրզա-Թաղի-խանը: Նա այստեղ գալով սկիզբը ձեռնամուխ եղաւ փոխել տեղական անջումանի մի քանի անդամներին, և նրանց տեղերը նշանակել նորերը: Նա, ճիշդ է, թէև գործում է պարսկական յեղափոխութեան ներքոյ, բայց արդէն իր մի քանի կատարած գործողութիւններից պարզապէս երևում է, որ այդ մարդը ոչ իբրև յեղափոխական է, այլ բաղդախնդիր մի անձնաւորութիւն:

3 օգոստոսի

Շրջակայքից ամենայն օր լուրեր ենք ստանում թալանների, սպանութիւնների և շատ գիւղերի վրա կատարված մասսայական աւազակային յարձակումների մասին: Նշանաւոր աւազակ Ղուլամ-Ալի Լօրը իր մի քանի ձիաւոր խմբերով սարսափ է ազդում Նիշաբուրի և դէպի Սաբզուար տանող ճանապարհների շրջանում:

Սաբզուարից Ասխաբադ ճանապարհված մօտ 100 ուղտերից կազմված մի կարաւանի առաջնորդ ուղտապանն այսօր առաւօտեան այստեղ հասնելով պատմում էր, որ յիշեալ աւազակը կարաւանի առաջը կտրելով իւրաքանչիւր ուղտին 10 ղռան փրկանք էր պահանջում: Հակառակ դէպքում, ինչպէս պատմում էր ուղտապանը, սպառնացել է անխնայ կերպով կոտորել բոլորին:

Ի վերջոյ [illegible] ղչելով մի կերպ վճարում են 60 թուման և կարաւանը շարունակում իր ճանապարհը: Նոյնանման դէպքեր յաճախ տեղի են ունենում այս կողմերում:

4 օգոստոսի

Դարագեազի գաւառից այստեղ հասնող լուրերը չափազանց յուզիչ են: Ըստ այդ լուրերի, քանի օր է, որ այնտեղ սկսել է հակասահմանադրական շարժում և խիստ շփոթութիւն է տիրում: Մանրամասն տեղեկութիւններ պակասում են:

Երէկ երեկոյեան տեղիս անջումանը մի հեռագիր է ստանում Մէշէդի կենտրոնական անջումանը-այալաթից մօտաւորապէս հետևեալ բովանդակութեամբ. «Փիշերով 100 հոգի մուջահիդ ճանապարհվեց տեղդ՝ Դարագեազ գնալու նպատակով. դիմաւորեցէք»: Համաձայն այդ հեռագրի, վաղ առաւօտեան, անջումանը, մունետիկի բերանով, յայտարարում էր քաղաքի ողջ ազգաբնակութեանը՝ հաւաքվել քաղաքից դուրս, Մէշէդից եկող մուջահիդներին—սահմանադրական կամաւոր—ընդունելու համար: Ժողովրդի շատ չնչին մասը խանութները փակելով շտապում է գնալ՝ դիմաւորելու սահմանադրական մուջահիդներին: Մօտ ժամը 12-ին ժողովրդի ուղեկցութեամբ կամաւորները հասնում են քաղաք, հետները բերելով բաւականաչափ զէնք և ռազմամթերք, որոնք բարձված էին ձիու վրա: Լսում ենք, որ վաղը կամ միւս օրը ճանապարհվելու են դէպի Դարագեազի գաւառը Միրզա Բաբա խմբապետի (կովկասցի) առաջնորդութեամբ, որը նոյնպէս Մէշէդից է եկել:

6 օգոստոսի

Ամսիս 4-ին քաղաքս հասած սահմանադրական մի քանի Թուրք կամաւորներ վայրագօրէն սուր են քաշում մի հայ գործակատարի վրա: Վերջինս գանգատվեց տեղիս ռուսաց գործակալին, իսկ գործակալը դէպքի մասին պաշտօնապէս յայտնեց քարգուզարին: Մենք յուսով ենք, որ վերջինները խիստ լուրջ կը վերաբերվեն այդ հարցին և ձեռք կառնեն կտրուկ միջոցներ, որպէսզի այլևս նման դէպքեր տեղի չունենան:

Քաղաքիս դատաւորը այսօր երեկոյեան Շիրվանից վերադարձաւ քաղաք. դրութիւնը խաղաղ է այստեղ:

Սահմանադրական կամաւորների մէջ խռովութիւն է ծագել. ոմանք ցանկութիւն չունեն Դարագեազ գնալու: Հետևանքի մասին կը հաղորդեմ: Իքս

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊՕՏՏՕՅԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

Երկուշաբթի, երեկոյեան ժամը 9-ին, կլուբի լսարանում յայտնի զինուորական գրող գեներալ Պօտտօն կարդաց իր դասախօսութիւնը Արևելեան Կովկասի նուաճման յիսնամեայ յօբելեանի առիթով: Դասախօսութեանը ներկայ էին Փոխարքայի օգնական գեներալ Շատիլօվը և բազմաթիւ օֆիցերներ ու պաշտօնեաներ:

Բաժանելով իր դասախօսութիւնը երկու մասի—պատմութիւն ռուսական ազգի յարաբերութիւնների Կովկասի հետ մինչև Գունիբի առումը և պատմութիւն, անցքերի Գունիբի առումից յետոյ—դասախօսը կարողացաւ տալ նրան գրաւիչ և հետաքրքրական բովանդակութիւն և արժանացաւ բուռն ծափահարութիւնների: Նա շօշափեց իր դասախօսութեան առարկան ոչ իբրև զինուորական, այլ իբրև անաչառ և քննադատող պատմաբան, տալով հակառակորդին արժանի յարգանք, ցոյց տալով ռուս զօրապետների և կովկասեան պատերազմի մի քանի ղեկավարների գործած սխալները:

Ճիշդ 50 տարի սրանից առաջ, 1859 թ. օգ. 25-ին,—սկսեց դասախօսը,—ամբողջ Կովկասում թնդաց աւետարանական «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն» [illegible] կասին նախապատմական ժամանակներից:

Կովկասի նուաճումը ռուս ժողովրդի պատմական միսիան էր: Նրա յարաբերութիւնները այդ երկրի հետ սկսվում են ռուսական պետական կեանքի արշալոյսին, Կիեվի փոքր իշխանութեան ժամանակից: Թւելով այդ յարաբերութիւնները Եարօսլավ Իմաստունից մինչև Իօանն Ահարկուն, դասախօսը ցոյց տուեց, որ Մեծն Պետրոսը սկսեց որոշ քաղաքականութիւն՝ հաստատելու ռուսական տիրապետութիւնը Կասպից ծովի ափերին և Կովկասում, և մի առ մի թւեց այդ մեծ զօրավարի և քաղաքագէտի ձեռք բերած նուաճումները, որոնք սակայն նրա յաջորդները չը կարողացան պահել իրանց ձեռքում: Եկատերինա կայսրուհին վերսկսեց Մեծն Պետրոսի գործը, նորից ձեռք բերեց նրա կատարած նուաճումները, բայց նրա յաջորդ Պավէլ կայսրի օրով դարձեալ ռուսները զրկվեցին այդ նուաճումներից: Սակայն որովհետև պատմական դէպքերը կախված չեն անձերի կամքից, ուստի նրանք անընդհատ առաջ են գնում: Երբ 1801 թ. սեպտ. 12-ին Վրաստանը միացվեց Ռուսաստանի հետ, արդէն անհրաժեշտութիւն դարձաւ ամբողջ Հիւսիսային Կովկասի և Դաղստանի նուաճումը, երկրի մէջ անդորրութիւնը ամրացնելու համար: Ահա այդ պլանի կատարումը սկսվեց 1818-ից, երբ կովկասեան զօրքերի գլխին կանգնեց Երմօլօվի պէս հզօր դէմքը, որ, արդարև, նուաճեց Կովկասը Ռուսաստանի համար, և բանաստեղծ Պուշկինը ամենայն իրաւունքով ասաց. «Խոնարհվիր, Կովկաս, գալիս է Երմօլօվը»:

Սակայն գործվեց մի մեծ պատմական սխալ. Երմօլօվին հնարաւորութիւն չը տրվեց աւարտել նուաճումը իր ծրագրով. նրա յաջորդները հետևեցին այլ քաղաքականութեան և ծրագրի, ուստի և ամբողջ 40 տարով յետաձգվեց Դաղստանի նուաճումը, և այն, ինչ որ կարող էր աւարտվել 1819-ին, աւարտվեց միայն 1859-ին:

Դասախօսը բացատրեց այդ սխալները և անցաւ այն րօպէին, երբ 1834-ին հանդէս եկաւ իմամ Շամիլը, մաքառեց ռուսական զէնքի դէմ մինչև 1859 թ. օգոստոսի 24-ը, երբ, վերջապէս, ստիպվեց անձնատուր լինել Գունիբում:

Մանրամասն նկարագրելով պատերազմները 1834-ից մինչև 1859 թ., դասախօսը նկարագրեց և այն րօպէն, երբ Շամիլը, ընկճվելով, խնդրեց, որ իր մօտ ուղարկեն Լազրեվին՝ բանակցելու անձնատուութեան պայմանների մասին, որովհետև Լազրեվը ահագին ժողովրդականութիւն էր վայելում լեռնականների մէջ: Նրա նկարագրութեան մէջ Շամիլը հանդիսանում է յարգանքի և ակնածութեան արժանի մի անձն: Ի թիւս այլոց իբրև բնորոշ գիծ, նա պատմեց, որ երբ Շամիլին տարան Մոսկվա և այդտեղ նրան հարցրին՝ ումն է կամենում տեսնել առաջին անգամ, Շամիլը պատասխանեց. «Ես կը կամենայի տեսնել Երմօլօվին». այնքան դեռ զօրեղ էր Երմօլօվի թողած տպաւորութիւնը 40 տարի առաջ:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Շնող գիւղ, 17 օգոստոսի

Թշնամուց, կամ աւելի լաւ է ասել, մի հասարակ բանով «ջգրացնողներից» ոխ հանելու վայրենի նպատակով հարևան-հակառակորդից տնտեսապէս քայքայելու (այգին կտրատել, ապրանքը գողանալ, կրակել և այլն) սոր սողունային սովորութիւնը, դառնապէս պէտք է խոստովանել, դեռ ևս թագաւորում է մեր գիւղերում: Ամսիս 11-ի գիշերը վառել են Յ. Տ. Բ.-ի դատն ցորենի դէզերը (1700 խուրձ), որի կէսը պատկանելիս է եղել մի ուրիշ աղքատ ընտանիքի: Կրակից ազատված խրձերի ցորենը այրվել, դառնացել է և անպէտք դարձել: Դեռ [illegible] թեան հասնող գիւղացիներին աջողվել է կրակը տեղն ու տեղը կզլխացնել, ապա թէ ոչ ամբողջ գիւղը կարող էր բռնկվել, որովհետև դէզերի ամբողջ շղթաներով բոլոր տները կապված են միմեանց հետ: Ահա թէ վայրենութեան հասած մարդիկ ինչպիսի միջոցների են դիմում «իրանց սիրտը հովացնելու» նպատակով: Անցեալ օրն էլ նոյն ամօթալի նպատակով ոչնչացրել, «թափ են տուել» 4 հատ մեղրով լի փեթակներ, որի տէրը գողերի թողած, «բրակ» արած մեղրի սև հացերը ապլուխում կապած բերել էր գիւղի «մէյդանը» գանգատվելու. հաւաքված հասարակութիւնը, սակայն, բացի գոռգոռալուց, ուրիշ միջոց չը գտաւ գողերին գտնելու համար:

Շարունակ տեղացող անձրևների պատճառով կալերը մնում են առանց կալսվելու: Օգոստոսի 13-ի գիշերը անձրևը սաստկանալով փոխվեց հեղեղի և զգալի վնասներ հասցրեց գիւղացիներին: Մեր հարևան Լըչկաձոր 20 տնից բաղկացած՝ սարալանջում գտնվող գիւղից հեղեղին զոհ է գնացել մի 12 տարեկ. պատանի, որի դիակը միւս օրը գտնվել է գիւղից բաւական հեռու ձորակում: Հեղեղը տարել է կալերից և սրահներից ցորենով լիք ջվալներ, կալսած, քամելու համար պատրաստի դէզեր և աւերել է շինուածքներ: Վնասը մեծ է:

Անցեալ յուլիսին տիկ. Փափազեան եկել էր մեր գիւղը, ջուլհականոցի հիմք դնելու նպատակով: Այդ նպատակի համար տիկինը գիւղացիներից հաւաքել է 72 ր. փող, որ յանձնվել է տեղացի Թորոս Մեհրաբեանին պահելու, մինչև տիկնոջ վերադառնալը, որը, իր ասելով, պէտք է լինի օգոստոսից ոչ ուշ:

Ցաւով պէտք է խոստովանել, որ մեր գիւղի երիտասարդութիւնը, որի վրա պէտք է ծանրացած լինի գիւղի բարեկարգութեան գործը, ժամանակ կիրակի օրերը, բացի խանութներում «ձմերուկանուկի» տալուց և «մէյդանի ղօխկաղների վրա շարվելուց», ուրիշ ոչնչով համարեա թէ չէ զբաղվում... Բ. Մկրտումեան

Նոր-Բայազէտ, 10 օգոստոսի

Հասարակութեան մի որոշ դասակարգ, գրաւոր դիմումն անելով գործակալին, հաշւետուութիւն էր պահանջել դպրոցի հոգաբարձութիւնից: Այդ առիթով հոգաբարձութիւնը երէկ ծխ. ժողով հրաւիրելով կարդաց իր ելք ու մուտքի յօդուածները 1908/9 ուս. տարվայ վերաբերմամբ, որից երևաց, որ դպրոցի բացը հասնում է 1,400 ր.: Չը բաւականանալով դրանով՝ ժողովը ընտրեց մի վերաստուգիչ յանձնաժողով, որին և յանձնարարեց նայել հոգաբարձութեան հաշիւները և իր ղեկուցման հետ ներկայացնել ծխ. ժողովին: Դրանից յետոյ ժողովն անցաւ հոգաբարձական խնդրին, առարկելով թէ ահա մի քանի ամիս է, ինչ հոգաբարձութեան մի քանի անդամներ հրաժարվել են և գործակալը այդ մասին ոչ մի տեղեկութիւն չէ տուել հասարակութեան, մինչդեռ ուսումն. տարին մօտենում է:

Ի վերջոյ հոգաբարձական կազմը լրացնելու համար ժողովը որոշեց յանձնարարել իր նախագահին՝ հեռագրով թոյլտւութիւն խնդրել տեղակալից՝ ժողով նշանակելու և լրացուցիչ ընտրութիւն կայացնելու համար:

Հոգաբարձութեան կամ դպրոցի բիւջէն մի 1000 ր. աւելացաւ, որով կարելի կը լինի դպրոցի պարտքի մի մասը հանգցնել: Հասարակապատկան խոտատեղերի տակը (հունձից յետոյ) աճուրդով ծախվեց տեղ. անասնավաճառներին — չոդարներին — 2043 ր., որից 1000 ր. իբր օժանդակութիւն տրվեց դպրոցին, իսկ մնացեալը որոշվեց գործադրել դումայի կիսատ շինութիւնը աւարտելու վրա: Ֆարս

Շուշի, 10 օգոստոսի

Ղարաբաղի շրջաններում կատարված խռովութիւնները հրատարակվում են «Մշակում»: Մեր բացակայութեան ժամանակ կատարված մի խռովութիւն ծածկված մնաց «Մշակի» ընթերցողներից, որը թէև բաւական ուշացած՝ դնում եմ հրապարակի վրա:

Ներքին-Թաղավարդ գիւղում մի երիտասարդ սիրահարվելով մի այրի կնոջ վրա՝ բերում է իրան համար որպէս երկրորդ կին: Առաջին կինը ահագին փոթորիկ է բարձրացնում. նրան միանում են թէ կնոջ եղբայրները և թէ տղայի ազգականները՝ հեռացնելու երկրորդ կնոջը: Սկսվում է անվերջ բողոք, ծեծ, հայհոյանք, անախորժութիւններ, բայց չէ աջողվում բաժանել սիրահարներին: Տղան թողնում է իր սեփական կինը, երեխաներին, տունը և երկրորդ կնոջ հետ կենակցութիւն հաստատում մի այլ տան մէջ: Այս անգամ ամբողջ գիւղը ոտքի է կանգնում, համախօսական է կազմում, որոշում այդ տղային, որպէս վարքի ու բարքի ապականող, հեռացնել գիւղից: Այս դէպքում արդէն կուսակցութիւնը սուր կերպարանք է ստանում: Սիրահարված տղան իր հօրից խնդրում է մի հրացան,

---

Իսկոյն զգացվում է, որ այստեղ արտակարգ դէպքեր են տեղի ունեցել, և այժմ էլ Գունիբը գնահատվում է իբրև լաւ ռազմական դիրք ունեցող մի կէտ:

Վերջապէս բարձրացանք վերև և մեր առաջ բացվեց նոյնիսկ մի բաւական ընդարձակ հրապարակ:

Դա Գունիբեան հրապարակն էր:

Իջանք Գունիբում:

Այստեղ են վարչական կենտրոնը, վաճառանոցը, պաշտօնեաների, առևտրականների, արհեստաւորների բնակարանները:

Բայց Գունիբ ասված տեղը չէ այն կէտը, ուր Շամիլը գերվեց:

Նա աւելի ևս բարձր տեղ է: Նա յայտնի է Փարոս կամ ռուսերէն Маякъ անունով:

Նախ քան Փարոս բարձրանալը, մենք հանգիստ առինք Գունիբում և տեսնվեցինք շատ անձերի հետ:

Գունիբի բարձրավանդակը ընդարձակ տեղ է և այնտեղ կան ամեն տեսակի հողեր՝ մարգագետիններ, արտեր, անտառներ, վարելահողեր, որոնց մեծագոյն մասը զինուորական վարչութեան հսկողութեան տակ է:

Գունիբի շուրջը ապրող ազգաբնակութիւնը բաղկացած է աւարներից, որոնք ապրելով բարձրադիր սառն տեղերում ընդհանրապէս հարուստ չեն:

— Գունիբցիները չեն բաւականանում իրանց հացով,—պատմում էին մեզ տեղացիները,—նրանք ամեն տարի հաց են գնում Լևվաշիում, Չենդուրայում, Թերեքի գիւղերում, նոյնիսկ Ջաքաթալում: Գնում են մեծ մասամբ գարի և սիմինդր:

— Իսկ իրանք ինչ են ծախում,—հետաքրքրվեցինք մենք:

— Անասնապահութեան արդիւնքներ՝ օրինակ կովեր, հորթեր, կարագ, իւղ, պանիր: Գովված է Րուժիքի և Գուդաուլ գիւղերի շրջակայքի իւղը: Այստեղ սովորութիւն է, որ իւղը ածում են մորթու կամ տոպրակի մէջ և այնպէս տանում դէպի վաճառանոց:

Ինձ հետաքրքրում էր աւարների լեզուն:

Հարց ու փորձ արի և կազմեցի մի փոքրիկ բառարան:

Տամ մի քանի նմուշներ այդ լեզուից:

Հայկական գլուխ բառը նրանց լեզուով յայտնի է «բեկեր» անունով, մազ—րաս, ճակատ—նօդօ, աչք—բերալ, յօնք—կըլըբուլ, քիթ—շումէր, բերան—կալ, լեզու—մածծ, վիզ—գուբուր, ականջ—ընսուլ, ձեռքեր—քուեր, մայր—էբել, կին—խլատի, աղջիկ—եասա, եղբայր—վըաց, եզ—օծ, ոչխար—քուջ և այլն:

Աւարները առհասարակ չը գիտեն ուրիշ լեզու և մեծ մասամբ անգրագէտ են: Իրանց մօլլաների մօտ սովորում են արաբերէն աղօթքները:

Գրագէտները օգտվում են արաբերէն տառերից գրելու և աւարերէն նամակներ և վկայաթղթեր: Եւ որովհետև լեռնականների լեզուներում շատ կան այնպիսի հնչիւններ, որոնք բացակայում են արաբերէն լեզուի մէջ, ուստի նրանք մի քանի տառերի վրա դնում են աւելորդ պայմանական կէտեր և նրանցով նշանակում այնպիսի հնչիւններ, ինչպէս են ճ, ծ, կ և ուրիշներ:

Գունիբում ինձ ցոյց տուին աւարական գիւղերում ձեռք բերված հին մետաղեայ ամաններ զանազան նկարներով, որոնցից մէկի վրա փորագրված էր երկգլխեայ արծիւ: Ինձ ցոյց տուին և մի կուժ, որը լցվում է ջրով յատակից և յետոյ երբ դրվում է սեղանի վրա ջուրը չէ թափվում:

Ինձ խորհուրդ էին տալիս ուղղել ճանապարհորդութիւնս դէպի մի հետաքրքրական ջրվէժ, որը դուրս է թափվում մի ժայռի մէջ գոյացած մեծ ծակից: Ջրի հոսանքը եկել է հանդիպել ժայռին, նրան ծակել և այնտեղից դուրս է թռչում մեծ ուժով, կազմելով հրաշքանչ ջրասիւն բազմաթիւ և բազմերանգ շիթերով:

Ցոյց տուին ինձ և բազմատեսակ զէնքեր, որոնք ներկայումս գործ են ածվում և հնում գործ են ածվել լեռնականների շրջանում:

Շամիլի մասին այստեղ շատ հետաքրքրական պատմութիւններ են անում, բայց նրանց մեծագոյն մասն աւելի աւանդութիւնների բնաւորութիւն է կրում, քան իսկական եղելութիւնների նկարագրութիւն, թէև այդ բոլորը մի 50—60 տարվայ անցեալին է վերաբերում:

Շամիլը իբրև մարդ, իբրև կրօնապետ, իբրև ազգապետ, իբրև ընտանիքի հայր, իբրև ամուսին առարկայ է զանազան մեկնութիւնների:

Մեզ հետաքրքրում էր Շամիլի վերջին ապաստանատեղը, որը եղաւ և նրա գերութեան վայրը:

Մենք գնացինք տեսնելու պատմական այդ հանդիսարանները:

Փարոս կոչված տեղը բարձր է Գունիբից մօտ 3000 ոտնաչափով. ուստի մենք պէտք է նոր վերելք կատարէինք:

Նախ անցանք մենք մի կամուրջ, որը հաստատված էր ամուր սիւների վրա:

Բնութիւնը սփոփիչ էր աչքերի համար, որովհետև կանաչ բուսականութիւնը աւելանում էր դէպի վերը:

Հասանք մի տեղի, որ կոչվում է «Շամիլեան դրունք»: Այդտեղից սկսվում էր անցքերի հետ աւելի սերտ կապակցութիւն ունեցող շրջանը:

— Ահա այս անտառումն էր Շամիլը, երբ վրա հասան ռուս զինուորները:

Անտառը բաւական մեծ է, տեղ-տեղ բաւական խիտ:

Աւելի առաջ գնացինք և հասանք Փարոսին, որը ունեցաւ ճակատագրական նշանակութիւն Շամիլի և նրա զինակիցների համար:

— Ահա այս Փարոսի մօտ կարողացաւ վեր բարձրանալ մի զինուոր, որը յետոյ օգնեց միւս զինուորներին թոկի սանդուխքով վեր ենելու: Երբ ռուս զինուորների խմբի յանկարծակի երևան գալը տարածվեց Գունիբի բարձրավանդակում, վհատութիւն տիրեց Շամիլին, և հարազատների ու մտերիմների խորհրդակցութիւնը վճռեց, որ դատը կորած է և ճակատագրական անհրաժեշտութեան առաջ պէտք է խոնարհել:

Շամիլը փորձեց մի վերջնական գրոհ տալ, բայց անկարելիութեան առաջ կանգ առաւ և որոշեց զէնքը վայր դնել:

Եւ Շամիլը եկաւ իր պարտութիւնը յայտնելու, իր խոնարհութիւնը ցոյց տալու:

Ինձ ցոյց տուին այն տաղաւարը, որտեղ իշխան Բարեատինսկին պաշտօնապէս ընդունել էր Գունիբի հերոսին:

Շամիլի պարտութեամբ և գերութեամբ վերջացան այն պատերազմները, որոնք յայտնի են մեր երկրի պատմութեան մէջ կովկասեան պատերազմներ անունով: Դաղստանը իր բոլոր մասերով հպատակութեան երդում տուեց և մտաւ ռուսական պետութեան կազմի մէջ:

Շամիլեան յիշատակարաններից նորից վերադարձայ Գունիբ:

Այնտեղից կազմեցի ճանապարհորդութեան մի նոր ծրագիր դէպի Դաղստանի խորքերը, դէպի Խունզախ, Բօթլիխ և ուրիշ հետաքրքրական վայրեր:

Այդ տեղերի մասին կը պատմեմ մի ուրիշ առիթով:

Ա. Քալանթար

վրէժխնդիր լինելու մի քանի երիտասարդներից: Հայրը ոչ թէ կատարում է որդու խնդիրը, այլ վռնտում է իր տնից: Տղան որտեղից որ է գտնում է մի պատոնի հրացան, գնում է իրանց այգիները, այդտեղ պատահելով մի Թուրք բէկի, սար բարձրացողի, սպանում է, վերցնում հրացանը և փամփուշտակալը, թագնվում անտառում, վրէժխնդիր լինելու իր հայրենակիցներից:

Թուրքի սպանութիւնը տարածվում է ամեն տեղ. հաւաքվում են նրա ազգականները, սպառնալիքներ կարդում հայերին: Դաշտավայր տեղերում հնձատեղ լինում են բազմաթիւ հայեր, լսելով դէպքը՝ փախչում են: Սկսվում է մի մեծ իրարանցում. գիւղ են գալիս պրիստաւ, գաւառապետ, ստրաժնիկներ, պահանջում են մարդասպանին, ձերբակալում են նրա հօրը և ազգականներին: Գիւղացիները կազմում են ժողով և այդտեղ որոշում են սպանել տղային, նախ ազատելու ձերբակալված մարդկանց և երկրորդ հնձատեղերի հայերի կեանքը փրկելու, որոնք գտնվում էին Թուրքերի մասում: Երիտասարդներից մի 10 հոգի շրջապատում են այն մարագը, որտեղ թագնված էր տղան և մի գնդակի հարուածով նրան փոխադրում են միւս կեանքը: Տղային սպանելով տանուտէրը բանտարկում է նրա սիրահար կնոջը, չը փախչելու կամ անձնասպան չը լինելու: Բայց չարաճճի հարսները պատուհանով նրան հաղորդելով տղայի սպանվելը՝ աւելացնում են, թէ «վաղը քեզ էլ իշի վրա նստացրած պիտի պտըտեցնենք գիւղը»: Երբ հարսները հեռանում են, սիրահարը գտնելով մի թոկ, վերցնելով հացի տաշտը, կախվում է նրա փայտից և խեղդամահ լինում: Ամեն տեղ տիրում է խորհրդաւոր լռութիւն: Թաղավրդի հանգստարանում իրարից 20 քայլ հեռու երկու նոր հողաթումբ ցոյց են տալիս այդ երկու տրագիկական մահով մեռնողների գերեզմանները: **

ՀԱՑԻ ԿՏՈՐ ԶԵՅԹՈՒՆՑՈՒՆ

Ստացանք Ասխաբադից Մարգար Հ. Աւագեանից մի օրինակ գին 5 ր.:

Այս գրքի վաճառումից մինչև օրս մեր խմբագրութեան մէջ հաւաքված է 40 ր. 20 կոպ.:

Նոյն անձից ստացանք և 1 ր. որպէս գին եապոնական երկու պատկերների:

ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ԳՐՔԵՐ

Ստացանք հետևեալ նոր հրատարակութիւնները. 1) Դասագիրք Բնական Պատմութեան, հայոց տարրական դպրոցների համար, մասն առաջին—Մարդ եւ Կենդանի (պատկերազարդ), տարրական մարդակազմութիւն և կենդանաբանութիւն, կազմեց Նիկ. Սարգսեան, Թիֆլիս, 1909 թ., գինն է 70 կ.: 2) Алфавитный списокъ драматическихъ произведеній на грузинскомъ, армянскомъ и татарскомъ языкахъ, разрѣшенныхъ для представленіе на сценахъ Кавказскаго края по 1 мая 1909 г., изданіе Ив. Тим. Полумордвинова, Тифлисъ, 1909 г., цѣна 50 к. (Այբուբենական ցուցակ դրամատիկական արտադրութիւնների վրացերէն, հայերէն և Թուրքերէն, թոյլատրված ներկայացման համար կովկասեան երկրի բեմերի վրա, մինչև 1 մայիսի 1909 թ., կազմեց Իվ. Տիմ. Պոլումորդվինով, Թիֆլիս, 1909 թ., գինն է 50 կ.): 3) Սոցիոլոգիա, Ախիլ Լօրիայի, գերմաներէնից թարգմանեց Պեսսիմիստ, Թիֆլիս, 1909 թ., գինն է 60 կ., 4) Հրաբուխ, Երկրաշարժ և Ջէյզեր, աշխարհագրական զրոյցներ, խմբ. Արտաշէս Աբեղեան, Թիֆլիս, 1909 թ., գինն է 20 կ.: 5) Ընդհանուր Պատմութեան դասագիրք, կազմած ըստ Վինօգրադովի, Ա. հատոր, Սկզբից մինչև Վերածնութիւնը, կազմեցին Դաղեան ամուսիններ, Թիֆլիս, 1909 թ., գինն է 45 կ., 6) Նոր Այբբենարան, աշակերտների և ուսուցիչների համար, հեղինակութիւն Ս. Մանդինեանի, Թիֆլիս, 1909 թ., գինն է 75 կ. (ուսուցիչների ձեռնարկի համար) և 15 կ. (աշակերտների համար):

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Ատրպատականի թեմի առաջնորդ Կարապետ ծ. վարդապետը Թաւրիզից եկել է Էջմիածին և մտադիր է հրաժարվել իր պաշտօնից:

◆ Անհագին Նաւթային Ֆօնտան.—Չէլէկէն կղզին, Կասպից ծովի ամենամեծ կղզիներից մէկը, որպէս յայտնի է, վաղուց նաւթի աղբիւր էր: Նոբէլի ֆիրման նաւթի և նրա արդիւնքների անհագին քանակութիւն դուրս բերեց: Օգոստ. 17-ին, որպէս հաղորդում է «Волгарь» լրագիրը, Նիժնի-Նովգորոդում մի գիտակ մարդուց սենսացիոն հեռագիր ստացաւ նաւթային անհագին ֆօնտանի մասին, որ նորերս խփել է Չէլէկէնում: Չէլէկէնը մօտ 30 վերստ երկարութիւն և 15 վերստ լայնութիւն ունեցող մի տարածութիւն է. Կրասնովօդսկից նրան անջատում է 60 վերստ տարածութիւն: Կղզու վրա կան գեղեցիկ, խորը, քամիներից պաշտպանված և նաւակների կանգ առնելու համար յարմար ծոցեր: Նաւթային նոր ֆօնտանի բացման լուրը յայտնի տպաւորութիւն կը գործի Վոլգայի շոգենաւային շրջանների վրա, որոնք իրանց շահերով կապված են Անդրկասպեան շրջանի նաւթային արդիւնաբերութեան հետ:

◆ Ղշլաղում օգոստոսի 23-ին կայացաւ ժողովրդական երրորդ դասախօսութիւնը: Բժիշկ Աղասարեանը խօսեց «գիւղական առողջապահութեան մասին»: Դասախօսի կարծիքով, շնորհիւ հայ գիւղացիութեան մշտական տգիտութեան, մեր հայ գիւղերը սանիտարական տեսակէտից ցաւալի պատկեր են ներկայացնում: Գիւղի ընդհանուր դիրքը շատ անգամ չէ համապատասխանում առողջապահական պահանջներին: Առհասարակ գիւղի աջող դիրքից է կախված բնակիչների առողջ կեանքը: Հայ գիւղի փողոցները նեղ են, դժուարանցանելի, մշտապէս կեղտոտ և գարշահոտութեամբ լի: Տները ընդհանրապէս գետնափոր, անլուսամուտ, հետևապէս և խոնաւ, մութ, բազմաթիւ հիւանդութիւնների մշտական բակ: Շնորհիւ գետնափոր բնակարանների՝ գիւղացիներից շատերը տանջվում են ոսկրացաւով: Գիւղացին ունի միայն մի փոխնորդ, այն էլ շաբաթներով և նոյն իսկ ամիսներով չի լուացվում: Գիւղացին, շնորհիւ իր հեշտասիրութեան, տաք ջրով լողանալ, գոնէ տարեկան մի քանի անգամ սովորութիւն չունի: Կան այնպիսի մարդիկ, որոնք միմիայն իրանց մանկութեան ժամանակ են լողացել: Կեղտոտ է հայ գիւղը, գիւղացու բնակարանը, նրա շապիկը: Դա նրա առանձնայատուկ սովորութիւնն է: Ահա վերոյիշեալ կեղտոտութիւնները աչքի առաջ ունենալով, բոլորովին զարմանալի չէ, որ հայ գիւղը նոյն իսկ կլիմայական հրաշալի պայմաններումն էլ գտնվում է զանազան վարակիչ հիւանդութիւնների ճանկերում և միշտ էլ կը մնայ՝ քանի որ հայ գիւղացին չի փորձի բարելաւել իր նիստ ու կացը: Բոլորովին հակառակ պատկեր են ներկայացնում մեր հարևան գերմանական կօլօնիաների, ռուսների և մօլօկանների գիւղերը: Նրանց փողոցները լայն, խաչաձև, տները բարձր, լուսամուտները մեծ, հետևապէս վարակիչ հիւանդութիւնները համեմատաբար պակաս: Վերջում յարգելի բժիշկը ցաւակցութիւն յայտնելով մեր գիւղացու դարաւոր տգիտութեան համար՝ կոչ արեց շինել մի բաղնիք հասարակութեան համար, որը մաքրութեան գործում անհագին ծառայութիւն կը մատուցանի և միևնոյն ժամանակ նրա եկամուտը կը յատկացվի գիւղական դպրոցին: Մ. Սողոմոնեանը հանրամատչելի ձևով խօսեց «բակտերիաների մասին»: Երկու դասախօսութիւններն էլ մեծ տպաւորութիւն թողին գիւղացիների վրա:

◆ Նոր-Բայազէտի նպաստամատոյց մասնաժողովը (ճիւղ Կենտրոն. Նպաստ. Յանձնաժողովի) հրատարակել է իր տեղեկագիրը, որից երևում է, որ ունեցել է մուտք 10,080 ր. 47 կ. և ծախք նոյնչափ: Այդ գումարից 5000 ր. ստացվել է Կենտրոնական Նպ. Յանձնաժողովից:

◆ Խօռսում օգոստոսի 23-ին, կիրակի կայացել է կոնսիստորիայի նախանդամ Եփրեմ վ. Սուքիասեանի նախագահութեամբ ծխական ժողով, եկեղեցական դպրոցի համար հոգաբարձուներ ընտրելու: Ժողովը միաձայն վերընտրեց Կոստանդին, Օրբելեանին և տ. Վ. Ջանյօեանցին:

◆ Մեզ խնդրում են յայտնել, որ Ղշլաղ գիւղի համար հրաւիրվող վարժուհու 24 դասի տարեկան վճարը ոչ թէ 360 րուբլի է, ինչպէս սխալմամբ տպվեց «Մշակի» յայտարարութեան մէջ, այլ 300 րուբլի:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Օգոստոսի 20-ին Պետերբուրգի համալսարանի պրոֆեսորների խորհրդի նիստում կը քննվի հրէաներին համալսարան ընդունելու հարցը: Հրէական խնդիրքներ տրված են 156, իսկ ազատ տեղեր կան 56: Խնդիրքներ տուողների թւում 45 հոգի ոսկէ մեդալներ ունեն, իսկ 26-ը արծաթէ: Պրոֆեսորների խորհուրդը, ի նկատի ունենալով որ ռուսների տուած խնդիրները անցեալ տարիների հետ համեմատած քիչ են, մտադրութիւն ունի միջնորդութիւն յարուցանել մինիստրի առաջ, որ ազատ տեղերը տրվեն հրէաներին: Նոյնպիսի առաջադրութիւն են անում և մասնագիտական բարձրագոյն դպրոցների դիրեկտորներն այն հրէաների մասին, որոնք քննութիւնը բռնել են, բայց չեն ընդունվել տոկոսային նորմայի պատճառով:

◆ Նորերս Պետերբուրգ է գնացել այժմ հռչակաւոր Բլէրիօյի ներկայացուցիչը, որը առաջարկել է զինուորական մինիստրութեանը օդապարիկների հարկաւոր քանակութիւնը հայթայթել իւրաքանչիւրը 5000 ր. արժողութեամբ: Համաձայնութիւն չէ կայացել:

◆ Ժողովրդական լուսաւորութեան դէպարտամենտը վերջերս մի շարք բացատրութիւններ հրատարակեց տնային, գաւառական և տարրական ուսուցիչների կոչում ստանալու համար քննութիւններ տալու հարցի մասին: Օրինակ, բացատրված է, որ 8-դասարանեան արական գիմնազիայի դասընթացքն աւարտողները տնային ուսուցչի կոչում ստանալու համար պարտաւոր են լիակատար քննութեան ենթարկվել միայն գլխաւոր առարկայից. տնային և գաւառական ուսուցչի կոչում ստանալու համար նոյնանման քննութեան պէտք է ենթարկվեն և այն անձինք, որոնք ուսուցչական սեմինարիան աւարտելով կամ քննութիւն տուած լինելով 1896 թւի մարտի 20-ի կանոնների հիման վրա ձեռք բերած ունեն տարրական դպրոցների ուսուցչի կոչում: Տարրական դպրոցների ուսուցչի կոչում ստանալու համար երկդասարանեան ուսուցչական դպրոցի դասընթացքն աւարտողները լիակատար քննութեան են ենթարկվում բոլոր առարկաներից: 6-դասարանեան րէալական դպրոցների դասընթացքն աւարտող անձինք տարրական դպրոցների ուսուցչի կոչում ստանալու համար պարտաւոր են կրճատ քննութեան ենթարկվել, բացի ռուսաց լեզուի և թւաբանութեան փորձնական դասերից:

◆ Օգոստոսի 26-ին Պետերբուրգ ժամանել են մի խումբ անգլիացիներ: Դրանք բոլորը բանկային, առևտրական և արդիւնաբերական ֆիրմաների կօմիսիօներներ են և եկել են Ռուսաստան ճանապարհորդների դիմակի տակ, իրանց ամուսինների և երեխաների ուղեկցութեամբ: Անգլիացիների գալստեան իսկական նպատակն է, որպէս հաղորդում են «Нов. Русь» լրագրին, տեղեկութիւններ հաւաքել, որպէս զի պայմաններ կապեն նաւթաբեր հողեր, ոսկու հանքեր, գործարաններ գնելու համար: Անգլիացիները նոյնպէս ուզում են դրամագլուխներ առաջարկել քաղաքներին և վստահութեան արժանի ֆիրմաներին փոխատուութիւններ տալու համար: Բացի Պետերբուրգից՝ անգլիացիները մտադրութիւն ունեն այցելել Մոսկվա, Նիժնի-Նովգորոդ, Վոլգայի ափերի վրա գտնվող և այլ խոշոր առևտրական և արդիւնաբերական քաղաքները:

◆ «Нов. Вр.» լրագիրը հաղորդում է, որ Սամարայից Պետերբուրգ բերված քաղաքական յանցաւոր Սէլպուխին, որը ապրում էր կեղծ դօկումենտի շնորհիւ Վոլկով ազգանուան տակ, սօցիալիստ-յեղափոխականների կուսակցութեան հիւսիսային շըրջանի մարտիկ բաժնի եռանդուն անդամներից մէկն է և Տրաուբէրգի հետ միասին (նրա կուսակցական մականունն է Կարլ) մշակեց և ի կատար ածեց իր համախոհների օգնութեամբ մի շարք տէրրօրիստական ակտեր: Դրանց ձեռքով սպանվեցին՝ գեներալ-մայոր Մին, գեներալ-լէյտենանտ Պաւլով, բանտի ժամանակաւոր հրամանատար Գուդիմա, Պետերբուրգի բանտի բանտապետ Իվանով և բանտային գլխաւոր վարչութեան հրամանատար Մաքսիմօվսկի: Յեղափոխականների մարտական բաժնի ձեռքով մահափորձեր կատարվեցին գեներալ-ադիւտանտ Դուբասովի, գեներալ Ռէյնբոտի, արդարադատութեան մինիստր Շչէգլովիտովի և Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչի կեանքի դէմ: Սէլպուխին նոյնպէս մասնակցել է ռումբերի և պայթուցիկ նիւթերի գործարանի կազմակերպութեան և վարչութեան մէջ Կելոմեակիում: Յեղափոխականների այդ մարտիկ բաժնի մեծ մասը բռնվեց 1906—1908 թւերի ընթացքում և միայն նրա մի քանի անդամներին աջողվեց փախչել, որոնց թւում և Սէլպուխինին, որը յետոյ ձերբակալվեց ուրիշ գործի համար և դատապարտվեց ցմահ տաժանակիր աշխատանքների: Յանցաւորի անցեալ գործունէութիւնը պատահմամբ իմացվեց:

◆ Ներքին գործերի մինիստրութիւնը խնդրում է մտցնել եկող տարվայ նախահաշւում 243,250 ր. կրկին 825 ոստիկանական պաշտօնեաներ վարձելու համար քաղաքական յանցաւորների վրա հսկելու նպատակով: Մի այդպիսի կրեդիտի անհրաժեշտութիւնը պատճառաբանվում է նրանով, որ դեռ էլի քաղաքական յանցաւորների նշանաւոր թիւ կայ և որ երկրի մէջ դեռ ևս բաւարար հանգստութիւն չը կայ:

ՖԻՆԼԱՆԴԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻՑ

◆ Բարձրագոյնս թոյլատրված է 1) բաց թողնել 600,000 մարկ ֆինլանդական մեծ իշխանութեան Ուշկարտանօ կալուածքը ձեռք բերելու համար այն պայմանով, որ նրա մի մասը տրվի հողագուրկներին կայսերական ֆինլանդական սէյմի մշակած հիմունքներով. 2) բաց թողնել 135,000 մարկ «Finland Wood C-o» ակցիօներական ընկերութեանը պատկանեալ հողը գնելու համար՝ Վազասի նահանգում հողագուրկներին յանձնելու համար միևնոյն հիմունքներով:

◆ Բարձրագոյնս հաւանութիւն է գտած ֆինլանդական սենատի մշակած բարձրագոյն առաջարկութեան նախագիծը, վերաբերեալ աւետարանական-լիւթերական եկեղեցու եկեղեցական կանոնադրութեան փոփոխութեան այս տարվայ պարլամենտի նստաշրջանի քննութեանը ներկայացնելու համար:

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԲԺՇԿԱԿԱՆ XVI ԿՈՆԳՐԷՍԸ

Բուդապեշտում փակվեց միջազգային բժշկական կօնգրէսը: Ըստ մասնակցող անձանց թւի՝ դա ամենաբազմամարդ կօնգրէսներից մինն էր, իսկ կարդացվելի զեկուցագրերի թիւը հասնում էր 1100-ի, որոնք բաժանվել էին 21 սեկցիաների:

Զեկուցագրերից, որոնցով հանդէս եկան բժշկականութեան յայտնի ներկայացուցիչները, աչքի էին զարնում հետևեալները:

Պրոֆ. Գուբէր (Միւնխէն)—ժառանգականութիւն, ընտրութիւն և առողջապահութիւն: Պրոֆ. Կուսնէր (Բերլին)—բժշկականութեան յետագայ զարգացումը: Պրոֆ. Վասֆորդ (Լօնդօն)—քաղցկեղային հիւանդութիւններ: Պրոֆ. Լավերան (Պարիզ)—սիրամոլական հիւանդութիւններ: Պրոֆ. Գօլլենդէր (Բերլին)—հիւանդութիւնները մինչև Կոլումբոսը: Պրոֆ. Ֆէրվօրն (Գէտտինգէն)—Նարկօզի մասին: Պրոֆ. Էմերիխ (Միւնխէն)—միկրօբաբանութեան հարցերի մասին: Պրոֆ. Դօուէն [Պարիզ] քաղցկեղի հիւանդութիւնների դէմ կռիւ մղելու մեթօդները: Պրոֆ. Բօաս (Բերլին)—ստամոքսի խեցգետինը: Պրոֆ. Գրէյֆ (Բերլին)—Տրախոմա հիւանդութիւնների պատճառները: Պրոֆ. Էնդրիչէկ (Բուդապեշտ)—ընդհանուր հասկացողութիւն նեվրաստենիայի մասին: Պրոֆ. Էյլէնբուրգ—աշակերտների ինքնասպանութեան մասին: Պրոֆ. Իպսէն (Ինսբրուկ)—խեղդվողի մօտալուտ մահը և այլն:

Կօնգրէսի բացման առիթով տօնակատարութիւններ արդէն սկսվել են «Palas obes Beaux-Arms»-ում, ուր ընդունվել են եկուոր հիւրերը: Կօնգրէսի օրը բացվել է նաև պրոֆ. Ֆօդօրի արձանը Sandas-fér հրապարակի վրա: Երկուշաբթի օրը, օգոստ. 17-ին, Բուդապեշտի քաղաքային վարչութիւնը ի պատիւ կօնգրէսի անդամների տուել է մեծ երեկոյթ ի պատիւ կօնգրէսում մասնակցող կանանց: Օգոստ. 19-ին կայացել է երեկոյթ պալատում: Արքիդուքս Յովսէփ, իբրև կայսրի ներկայացուցիչ, ընդունել է կառավարութիւնների և համալսարանների պատգամաւորներին: Օգոստ. 21-ին 21 սեկցիաների նախագահները տուել են երեկոյթ ի պատիւ իրանց հիւրերի: Վերջապէս օգ. 21-ին, կօնգրէսի փակման նախօրեակին, ի պատիւ նրա երեկոյթ է տուել կոմս Ապպօնին՝ ունգարական ժողովրդական լուսաւորութեան մինիստրը:

Դժբաղդաբար կօնգրէսին մասնակցելուց հրաժարվել են սլաւօնական ժողովուրդներին պատկանող բժշկական կօրպօրացիաները:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԵՐՈՒԱՆԴ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԲՈՂՈՔԸ*)

Նորին Վեհափառութեան Տ. Տ. Մատթէոսի Սրբազնագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց

Մայր Աթոռի միաբան
Երուանդ վարդ. Տէր-Մինասեանից
Ամենախոնարհ յայտարարութիւն.

Յայտնի է անշուշտ Ձերդ Վեհափառութեանը, որ անցեալ 1908 թ. նոյեմբեր ամսի սկզբին՝ ամենայն հայոց հայրապետութեան տեղակալ տ. Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանի կարգադրութեամբ, Մայր Աթոռի պաշտօնական «Արարատ» ամսագրի հոկտեմբերի տետրակից հանվեցին և կրակի մատնվեցին իմ «Հայոց եկեղեցու վերանորոգութեան խնդիրը» վերնագրով յօդուածի թերթերը: Ի՞նչ շարժառիթներից դրդված և ում խորհրդով արեց նա այդ միջնադարեան, հայ քրիստոնէական ազատախոհ եկեղեցուն անջնջելի արատ բերող կարգադրութիւնը, անկարելի եղաւ այնուհետև իմանալ, թէև ես, իբրև տուժող, գրաւոր բողոք ներկայացնելով նորին ամենապատուութեան տ. տեղակալին, խնդրեցի միաբանական ժողով հրաւիրել, որպէսզի պարզվի, թէ ս. Էջմիածնի միաբանութիւնն ինչ է մտածում եկեղեցական վերանորոգութեան մասին և արդեօք գայթակղվե՞լ է իրոք իմ արած առաջարկներից, ինչպէս ինքը տ. տեղակալն յայտնել է բերանացի: Տ. տեղակալը խոյս տուեց միաբանական ժողով հրաւիրելուց և այդպիսով խնդիրը մնաց առկախ մինչև այսօր՝ մինչև Ձերդ Վեհափառութեան Հայրապետական Աթոռ բազմելը:

Բայց այս այնպիսի խնդիրներից է, որոնք սկզբունքի տեսակէտից ամենամեծ նշանակութիւն ունեն եկեղեցու համար և այդպէս առկախ, առանց պարզ և որոշ լուծման մնալ չեն կարող: «Իրաւունք ունեն հայոց եկեղեցու պաշտօնեաները ազատ կերպով մտածելու և արտայայտելու իրանց կարծիքները եկեղեցական կարևոր, բարեփոխութեան կարօտ խնդիրների մասին, թէ նրանց վիճակված է միայն անշեղ կերպով հետևել անցեալ դարերից ժառանգութիւն մնացած, արդի աշխարհահայեացքին ու կեանքին բոլորովին անհամապատասխան աւանդութիւններին ու կարգերին»: Ամենայն հայոց հայրապետութեան տեղակալը չը կամեցաւ ինձ այդ հիմնական հարցի պատասխանը տալ, թէև նա իր կարգադրութեամբ արդէն արգելել էր ազատ մտածողութիւնն ու նրա արտայայտութիւնը հայոց եկեղեցու մէջ և ուրեմն իրան համար պարզ պիտի լինէր, թէ ինչ է իր ասելիքը:

Այդ պատճառով բողոքելով տ. տեղակալ Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանի՝ հայոց եկեղեցու շահերին միանգամայն անհամապատասխան կարգադրութեան և նրանից յետոյ ցոյց տուած անտարբեր վերաբերմունքի դէմ, դիմում եմ Ձերդ Վեհափառութեան արդարադատ վճռին, խնդրելով ամենախոնարհաբար, որ Ամենայն Հայոց Հայրապետդ իր հեղինակաւոր ձայնը լսելի անէ ամբողջ հոգևորականութեան և ժողովրդի առաջ, սրբէ հայոց եկեղեցու վրայից տ. Գէորգ արքեպիսկոպոսի թողած անպատուաբեր բիծը, յայտարարելով որ հայոց եկեղեցու վարդապետը իրաւունք և սրբազան պարտականութիւն ունի մտածելու և գրելու եկեղեցական կարիքների մասին և ոչ ոք իրաւունք չունի բռնի միջոցներով դանակով ու կրակով ազատ միտքը կաշկանդելու:

Պատիւ ունիմ Ձերդ Վեհափառութեանը ներկայացնելու իմ վէճի առարկայ դարձած յօդուածները («Արարատ», մայիս-յունիս և դեկտեմբեր 1908 թ.) և տ. տեղակալի անունով 1908 թ. նոյեմբերի 14-ին տուած բողոքի պատճէնը, որպէսզի Ձերդ Վեհափառութիւնն անձամբ համոզվի, թէ որչափ անիրաւացի է եղել տ. տեղակալի կարգադրութիւնը:

Սպասելով Ձերդ Սրբութեան իմաստուն վճռահատութեանը՝ մնամ խոնարհ որդի՝

Երուանդ վարդապետ Տէր-Մինասեան
Միաբան Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի
Էջմիածին, 2 յուլիսի

ՀԵՐՔՈՒՄՆԵՐ

«Մշակի» № 157-ում տպված նամակը «Ծխական» ստորագրութեամբ, Կարսից, առիթ է տուել այդ քաղաքի հայ քահանաներին՝ ընդարձակ հերքումներ ուղղել մեզ, որոնց տեղ տալ անկարող ենք պարզապէս տեղի սղութեան պատճառով: Հերքումներ ուղարկել են մեզ Մինաս ա. ք. Տէր-Պետրոսեան և Վաղ. ք. Ֆրոյինեան: Հերքելով քահանաների վրա Ծխականի կողմից բարդված մեղադրանքները, Մինաս ա. ք. վերջացնում է իր նամակը այսպէս.

«Չեմ ուզում կուրօրէն պաշտպանել քահանաներին: Եթէ զեղծում գործողներ կային նրանց մէջ, ի վնաս եկեղեցու և Մայր Աթոռի արդիւնքներին, երեցփոխն ու հոգևոր կառավարութիւնը խիստ կերպով պէտք է բողոքէին այդ առիթով: Երբ այդ չը կայ և չէ եղել, ամբողջ յանցանքը երեցփոխինն ու հոգևոր կառավարութեանն է: Բայց Ծխականը միտումաւոր դիտաւորութեամբ քահանաներին է զրպարտում և անմեղ տեղը պարզամիտ ժողովրդին գայթակղեցնում: Ի՞նչ կայ այնպէս հեշտ, ինչպէս հոգևորականութեան վրա սանձարձակ յարձակումը: 46 տարի է քահանայական կոչումն ընդունելս և 22 տարի է, որ պաշտօնավարում եմ Կարսի ս. Աստուածածին եկեղեցում. բողոքելով բողոքում եմ յօդուածագրի զրպարտութեան դէմ և խնդրում եմ այդքան ժամանակում եղած երեցփոխներից և հոգևոր կառավարութիւնից՝ հրապարակով բարեհաճել յայտնել, եթէ գործել եմ, արդեօք զեղծումները եկեղեցու և Մայր Աթոռի արդեանց վերաբերութեամբ: Եթէ վկայէն անհաւատարմութեանս մասին, պատրաստ եմ ըստ Աւետարանի ասել. «Եթէ զոք զրկեցի, հատուցից չորեքկին»:

Նոյնպէս և Վ. ք. Ֆրոյինեան, հերքելով իր վերաբերմամբ մեղադրանքները, վերջացնում է նամակը այսպէս.

«Ուստի ես իմ միաբան եղբարց հետ առաջարկում ենք Ծխականին, որ անպատճառ հրապարակ հանէ զեղծարար քահանաների անունները իրանց գործած զեղծումներով հանդերձ, որպէսզի հասարակական մեղադրանքից գէթ ազատ լինեն միւսները»:

Ճշմարտութիւնը ստիպում է կատարել բողոքող քահանաների պահանջը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐՔԵՐԸ ԵՒ ՄԻՑԿԵՎԻՉԸ

Երիտասարդ Թիւրքիան, յանձին «Մ. և Ա. կօմիտէտի», յաւերժացրեց լեհական ազգային բանաստեղծ Ադամ Միցկեվիչի յիշատակը:

Այն տնակի պատին, ուր վախճանվեց Միցկեվիչը, Կ. Պօլսի փողոցներից մինի վրա, խփված է բրօնզէ տախտակ Թուրքերէն հետևեալ մակագրութեամբ. «Այստեղ վախճանվեց բանաստեղծ Ադամ Միցկեվիչը՝ Թիւրքիայի բարեկամը: Մ. և Ա. կօմիտէտ»:

Ի պատիւ այդ դէպքի տեղի ունեցաւ բնորոշ ցոյց, մի ամբողջ հանդէս:

Հանդէսն սկսվեց հոգեհանգստով կաթօլիկների տաճարում, ուր և արտասանեց պատշաճ «խօսք» տեղական լեհ քահանան:

Կաթօլիկական սրբավայրում ժողոված անձանց մէջ կային «Մ. և Ա. կօմիտէտի» պաշտօնական ներկայացուցիչները, երիտասարդ պարսիկների պատգամաւորութիւնը, մահմեդական ժողովրդի հոգևոր հովիւը, մահմեդական ուսանողութեան ներկայացուցիչները, հրէաների պատգամաւորները, շատ կազմակերպութիւնների անդամներն և այլն:

Այստեղ էին Մեհմէդ փաշան, Թէվֆիկ փաշան, Րիֆատ փաշան, սուլթանական պահակախմբի պետ Խալիլ-բէյը, Միցկեվիչի բարեկամ Իբրահիմ փաշան, պարսից անջատման պարագլուխ Սէիդ Եազին, յայտնի սիօնիստ բժ. Սօկոլով, օֆիցերներ, կաթօլիկ վանականներ, իմամներ, լեհեր, ֆրանսիացիներ և այլն:

Տաճարից այս ամբողջ բազմազան ամբոխը, «զգեստների և դէմքերի, ցեղերի, բարբառների խառնուրդը», դիմեց Պէրայի փողոցներով դէպի Միցկեվիչի տնակը:

Ճանապարհին ամբոխն աճեց չեղած չափերի:

Լեհ-Թիւրքական ցոյցը կանգ առաւ այն ամբիոնի առաջ, որ շինված էր կօմիտէտի լեհ հռետորների համար:

Միցկեվիչի տօնակատարութիւնը սկսվ...

---

*) Տես «Մշակ» № 179, «Ներքին լուրեր»:

մանկական սովորութեան համաձայն գառը մորթելով։

Ապա ամբիոն բարձրացաւ համալսարանի պրոֆեսոր Հասան-էֆէնդին, որ ճառ արտասանեց Միցկևիչի ծառայութիւնների մասին իր ժողովրդին և քաղաքակրթութեանը։

Երիտասարդ-Թիւրքերի կոմիտէտի կողմից խօսեց Սաբահէդդին-բէյը։

Հռետորները փառաբանեցին Միցկևիչին իբրև ազատութեան և ժողովրդական երջանկութեան մարտիկի և այն իդէալների մարմնացողի, «որոնց մի մասը միայն աջողվեց իրականացնել Թիւրքիայում»։

Ամբիոնից կարդացվեցին ողջոյններ և հեռագիրներ թուրքերէն, ֆրանսերէն և այլ լեզուներով։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

24 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Օրվայ ընթացքում խոլերայով հիւանդացան 23, մեռան 7 հոգի, հիւանդների թիւը ներկայումս 284 է։

Սախալինի կղզու գինւորական նահանգապետ գ. մ. Վալուէվը նշանակվեց Սախալինի շրջանի նահանգապետ։

1-ին կարգի կապիտան Մանկօվսկին նշանակվում է հակածովապետ։

Բժշկական գլխաւոր տեսչի վարչութիւնը մշակեց կանոնադրութեան մի նախագիծ, վերաբերեալ Կայսրութեան ծովային և ցամաքային սահմանները վարակիչ հիւանդութիւնների մուտքից պաշտպանելուն։

Գաղթականական վարչութեան տեղեկութիւններից երևում է, որ յունվ. 1-ից մինչև օգ. 15-ը Սիբիր են գաղթել 628,604 հոգի, իսկ նոյն ժամանակամիջոցում վերադարձել են 85,424 հոգի։

ՎԼԱԴԻՎՕՍՏՕԿ։ Սկսվեցին միջազգային ձիարշաւները։ Մասնակցում են անգլիական, ամերիկական, ճապօնական և աւստրալիական ձիերը։

ՍԱՐԱՏՕՎ։ Ձերբակալվեց 1906 թւի փետրվարին փախած Ալէքսանդր Կարրը, որ Մօսկվայում դատապարտվեց մօրը և երկու քոյրերին սպանելու համար։

ՄՕԳԻԼԷՎ (Նահ.)։ Լօմսկ գիւղում այրվեցին 64 գիւղական դաստակերտներ և 22 պահեստ հաճարով ու խոտով։ Վնասը հասնում է 40,000 րուբլու։ Յօգուտ վնասվածների հանգանակութիւն է բացված նահանգի սահմաններում։

ՄՕԳԻԼԷՎ։ Մօրդօվ գիւղում հրդեհը ոչնչացրեց 120 տներ։

ՎԱԼԿԻ։ Քաղաքային դուման որոշեց քաղաքի և զէմստվօյի հաշւով բանալ ռէալական դպրոց։ Նրա պահպանութեան համար ազգաբնակութիւնից ժողոված է 7000 ր.։

ՆՈՎՕՉԵՐԿԱՍԿ։ Տագանրօգի վիճակում ձերբակալվեցին Բրօդսկու հանքի գրասենեակը կողոպտող երեք չարագործները։

ՅԱՐՕՍԼԱՎԼ։ Նահանգապետը բացեց հողային բարեկարգութեան մասնաժողով։

ՎԻԷՆՆԱ։ Բացվեց հին կաթոլիկական համագումարը։

ԼՈՆԴՈՆ։ Ռէյտերի գործակալութեանն հեռագրում են Պէկինից, որ չին-ճապօնական համաձայնութեան ուժով Ճապօնիան Տումէն գետը ընդունում է սահման Կորէայի և Մանջուրիայի միջև. Ճապօնիան կը մաքրէ Ջիտաուն երկու ամսվայ ընթացքում։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ս. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ԹԻՖԼԻՍԻ ՃԻՒՂԸ

Արժէթղթերի կուրսերը

24 օգոստոսի

I կ. ներք. փոխ. խ. տոմս.	436 ր.	— կ.
II » » »	323 ր.	50 կ.
III Ազնւակ. բանկ. »	296 ր.	50 կ.
4% Պետական րենտա	88 ր.	37½
5% Պետ. Ազնւ. բանկ գր. թ.	97 ր.	50 կ.
4½% » » » »	88 ր.	75 կ.
4% » » » »	84 ր.	— կ.
3½% » » » »	79 ր.	— կ.
5% Գիւղ. հող. բան. վկ.	97 ր.	50 կ.
5½% » » » »	88 ր.	75 կ.
4% » » » »	84 ր.	50 կ.
5% Ներքին փոխառ. 1905 թ.		
I հրատ.	100 ր.	25 կ.
5% » II հրատ.	100 ր.	25 կ.
5% Արտաք. » 1906 »	100 ր.	37½
5% » » 1908 »	100 ր.	25 կ.
4% Պետական գանձար.	100 ր.	— կ.

Օտարերկրեայ դրամների կուրսը

Լօնդօն 10 ֆ. ստեր.	94 ր.	15 կ.
Բեռլին 100 մարկ	46 ր.	09 կ.
Պարիզ 100 ֆրանկ	37 ր.	41 կ.
Թաւրիզ 100 ղռան	18 ր.	— կ.
Կ. Պոլիս 1 լիրա	8 ր.	65 կ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—11 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ. հ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Ն. Վ. ԱԼԲՐԵԽՏ—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
Օ. Վ. ԳԵՅԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Օ. Վ. ԳԵՅԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ ԴԱՐՁՐԷՔ!

Տղամարդկանց հագուստի համար կտորեղէնների շրջանում եղած նորութիւնն «Շէվիօտ Կօյնիմր» կտորն է։ Այնպիսի մի էժան գնով՝ այն է 5 րուբլի 25 կ., լաւ տեսակները 6 ր. 25 կ., տղամարդկանց ամբողջ կօստիւմի համար, 4¼ արշին, կտորը ոչնչով չէ զանազանվում արշինը 5—6 ր. արժեցող նոյնատեսակ կտորից և ունի նրա բոլոր յատկութիւնները, այն է՝ դիմացկուն ամրութիւն, գործնականութիւն և շքեղութիւն։ Գոյները՝ սև-մուգ, կապոյտ, շականակագոյն, ողորկ-ձիթագոյն, կամ թէ նոյն գոյները՝ բծերով։ Ուղարկվում է պօստով, վերադիր վճարով և առանց կանխավճարի։ Երեք կամ աւելի կտոր պատուիրելուց՝ իւրաքանչիւր կտորին ձրիաբար կցվում է հարկաւոր քանակութեան աստառացու։ Առանց ռիսկի, լրիւ երաշխաւորութիւն, եթէ կտորը չը հաւանվի՝ յետ է վերցվում։ Պահանջները խնդրում եմ հասցէագրել՝

Въ фабрику шерстяныхъ издѣлій
ЗИГМУНТА РОЗЕНТАЛЯ г. Лодзь № 15. К.

Թղթակցութիւնները ռուսերէն լեզուով։

(В. 45106) 742. 1—1

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

Վաճառվում են

Երգեցողութիւն ս. պատարագի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ փոխադրեալ և դաշնագրեալ յերիս ի չորիս ձայնս ի ձեռն Մ. ԵԿՄԱԼԵԱՆԻ, գինն է 8 ր.։

(Alto) երգեցողութիւն ս. պատարագի վասն քառաձայն խառն խմբի (ի զգեստաւորելն քահանայի), գ. 1 ր. 50 կ.։

(Basso) երգեցողութիւն ս. պատ. վասն եռաձայն արական խմբի (ի զգեստաւորելն քահանայի), գ. 2 ր.։

(Soprano) երգեցողութիւն ս. պատ. վասն քառ. խառն խմբի (ի զգեստ. քահ.), 1 ր. 50 կ.։

(Tenore) երգեցող. ս. պատ. վասն եռաձ. արական խմբի (ի զգեստ. քահ.), 2 ր.։

Դիմել՝ Въ Тифлисъ, Центральной книжной торговлѣ. 854 (չ.) 10—1

ԹՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՒ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Գրիգորիս ա.-ք. ԵՐԶՆԿԵԱՆՑԻ
(Ըստ Գօլդենբերգի)

I, II տարի իններորդ տպագր. գ. 30 կ.
III, IV » հինգերորդ տպագր. » 35 կ.

Վաճառվում են
Կենտրօնական գրավաճառանոցում

Բոլորն էլ ընդունված են մեր դպրոցներում։

(ա. օ.) 853. 5—1

Վ-Ագուլեաց դպրոցի համար ռուսախօս ուս.-վերակացու

ՀՐԱՒԻՐՎԱԾ Է

855. (չ.) 1—1

ԴԱԴԵԱՆ ամուսինների կազմած դասագրքերի պահեստը գտնվում է «ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ» գրախանութում

Լոյս են տեսել

ԸՆԴՀ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ա. հ. V բ. գ. 45 կ.
ԲՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ ա. հ. III բ. գ. 55 կ.
ԲՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ բ. հ. IV բ. գ. 50 կ.

Գումարով գնողներին 20% զեղչ։
Տպագրվում են միւս հատորները։

(օգ. 26,29, սեպ. 1,5,9,14) 856. 6—1

Ախալքալաքի հայոց եկեղեց.-ծխ. դպրոցների ուսուցչական խումբն արդէն կազմված է։ Առանձին պատասխան չը ստացողներն ազատ են։

Նախագահ հոգաբարձութեան՝
Վ. Կարապետեան
Քարտուղար՝ Ղ. Տէր-Գրիգորեան

852 1—1

Եղեսիայի հայոց եկ.-ծխ. օրիորդաց միդասեան և տղայոց երկդասեան դպրոցների համար հարկաւոր է **մի ուսուցիչ** ռուսաց լեզուի տարեկան 400 ր. ռոճիկով և **մի ուսուցչուհի** 300 ր. ռոճիկով. վերջինս կը տրվի ռոճիկից՝ զատ միմիայն սենեակ։ Ցանկացողները թող շտապեն դիմելու հետևեալ հասցէով՝ Черезъ гор. Моздокъ въ м. Эдиссію, Попечительству армянскихъ училищъ։

Հոգաբարձութիւն

Լոյս տեսաւ
ԳՐԻԳՈՐ ՎԱՆՑԵԱՆԻ
„Հայ հեղինակներ“

գիրքը, հեղինակի ձեռքով բարեփոխված և հարստացված (384 էջ)։

Գինն է 1 րուբլի

Դիմել Թիֆլիսի գրավաճառներին։ Մամուլի տակ է «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ», պատկերազարդ, բարեփոխված, Գ. տպագրութեամբ։ (հ. կ.) 734. 10—8

ԾԱԽՎՈՒՄ Է

ՇՈՒՇՈՒ ԳԱՒԱՌՈՒՄ ՄԻ ՀՈՂԱԲԱԺԻՆ

որ բաղկացած է 100 դեսեատինի չափ և որի սահմաններում գտնվում են Շիխէր գիւղը, վարելահող, այգիներ և անտառ։

ՁԵՌՆՏՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Դիմել՝ Թիֆլիս, **ԷԿՕՆՕՄԻԱ** տպարանին։

ա. օ. 840. 10—3

ԹԻՖ. ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳ. ԸՆԿ.

Գուլպայագործութեան արհեստանոցում

ընդունվում են աշակերտուհիներ. կարող են դիմել կանայք և 14 տարեկան հասակից բարձր օրիորդներ։ Ընդունվում են պատուէրներ՝ գուլպաներ երկու սեռի, երեխայոց կօստիւմ, գամաշ, ժերսէ և շրջազգեստներ եայլն։

Հասցէն՝ Гановская, 19.

(ե. չ.) 848. 2—2

ՋԳՐԱՇԷՆԻ

դպրոցում կը բացվի IV բաժանմունք, եթէ թոշակ վճարող աշակերտ-աշակերտուհիների թիւը այդ բաժանմունքում կը լինի 35-ից ոչ պակաս։ Խնդիրները կընդունվեն մինչև ամսիս 27-ը։ Ուսման վարձը այդ բաժանմունքում 15 րուբլի է։

Հոգաբարձութիւն

(կ. ե. չ.) 838. 3—3

«ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ» ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑ.

Վաճառվում են.

Երգեցողութիւնք ս. պատարագի Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ փոխադրեալ և դաշնագրեալ յերիս ի չորիս ձայնս ի ձեռն Մ. ԵԿՄԱԼԵԱՆԻ, Գինը 10 ր.

(Alto). Երգեցողութ. ս. պատ. վասն քառաձայն խառն խմբի (ի զգեստաւորելն քահանայի) գ. 2 ր.

(Basso). Երգեցութ. ս. պատ. վասն եռաձայն արական խմբի (ի զգեստաւորելն քահանայի գ. 3 ր.

(Soprano). Երգեցողութ. ս. պատ. վասն քառաձայն խառն խմբի (ի զգեստաւորելն քահանայի) գ. 2 ր.

(Tenore). Երգեցողութ. ս. պատ. վասն եռաձայն արական խմբի (ի զգեստաւորելն քահանայի) գ. 3 ր.

Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ «Гуттенбергъ»։ Գումարով գնողներին մեծ զեղչում կը լինի։ Ուղարկելու ծախքը գրախանութի վրա է։

828. (ա. օ.) 5—4

Լոյս տեսաւ և վաճառվում է
Ա. ՇԱՀՄԱԶԵԱՆԻ կազմած

ՏԱԽՏԱԿ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՅՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒԹԵԱՆ

(Անհրաժեշտ ձեռնարկ հիմնական գոյների և նրանց բաղադրման հետ ծանօթանալու համար)։

Տպագրված է մեծ թերթով դասարանների և փոքր աշակերտների համար։

Տախտակը կարելի է գնել Թիֆլիսի բոլոր գրավաճառներից և թղթավաճառներից։

(կ. ե. չ.) 836. 3—3

ԵՐԶՆԿԵԱՆՑ

Գրիգորիս աւագ քահանայի
կազմած ԴԱՍԱԳՐՔԵՐԸ

«ՈՒՍՈՒՄՆ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ» Հայաստանեայց ս. եկեղեցու. համառօտ դասընթացք հոգևոր և պետ. դպ. համար, նկարներով . . . 50 կ.
«ԲՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ» (ֆիզիօլօգիա) Ֆօսթէրի, նկարներով . . . . . . 30 կ.
«ԴԱՍԱՒԱՆԴՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ» ուսուցչաց համար . . . . . . 20 կ.
«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ» . . . . . . 1 ր. —

Վաճառվում են Կենտրօնական և «Գուտտենբերգ» գրավաճառանոցներում և իր մօտ (20% զեղչով) Грибоѣдовская, 20.

(օ. մ.) 811. 6—3

Լոյս տեսաւ

„ԴԱՍԸՆԿԵՐ“

Առաջին տարվայ
Այբբենարան-ընթերցարան
Բոլորովին նոր ուղղութեամբ
Զարդարված բազմաթիւ գունաւոր պատկերներով
Դասագրքին կից կայ համառօտ բացատրութիւն գործադրողներին։
Կազմեցին
Ա. ՉԻԼԻՆԿԱՐԵԱՆ եւ Տ. ՌԱՇՄԱՃԵԱՆ
Աշխատակցութեամբ Ար. ԻՍԱՀԱԿԵԱՆԻ։

Ծանօթանալ ցանկացող դասատուները կարող են ձրիաբար ստանալ «Գուտտենբերգ» գրախանութից։ Օտար տեղերից դիմողները պիտի ուղարկեն միմիայն ճանապարհածախքը 10 կ. պօստի մարկայով։

ԿԱԶՄԱԾ
Գինն է 50 կ.

Բոլոր քաղաքների գրավաճառներին զեղչ 25%

Գումարով առնողներին 20 տոկոս զեղչ։ Ցանկացողները դիմեն Թիֆլիս, «Գուտտենբերգ» գրախանութին։

(օ. մ.) 754. 10—8

Կ. Հ. Բ. Ընկ. հրատարակութեամբ
Լոյս տեսաւ
ՍԵԴՐԱՔ ՄԱՆԴԻՆԵԱՆԻ

ՆՈՐ ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

(օրգանական մեթօդով)

Գինն է՝ Ուսուցչական մասի՝ 75 կոպ.
Աշակերտական մասի՝ 15 կոպ.

Պահեստը գտնվում է Ն. Մատինեանի գրախանութում։ Դիմել՝ Тифлисъ, Эрив. площадь, Книжный Кіоскъ „Паросъ“ Н. Матиняна.

(օ. մ.) 799. 5—4

Ռ. ԽԱՆ-ԱԶԱՏԻ և Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆԻ

Նախապատմական մարդը
և
Հայկական առասպելներ

Գինն է 50 կ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Գինն է 75 կ.

Պատկերազարդ դասագրքերը 3-րդ և 4-րդ բաժանմունքների, ինչպէս նաև ժողովրդական ընթերցանութեան համար, վաճառվում են «Գուտտենբերգ», «Կենտրօնական» և «Փարոս» գրավաճառանոցներում։

805. (օ. մ.) 10—3

Մերվի հայոց ծխական դպրոցի համար հարկաւոր է՝ ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ, որ աւանդելու է 12 դաս ռուսաց լ., 6 դ. ձեռագործ և 5 դ. թւաբանութիւն. ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ՝ 12 դ. հայոց լեզու, 4 դ. իրազննութիւն, 2 դ. հայերէնագիտութիւն, 3 դ. բնական պատմութիւն, 4 դ. վայելչագրութիւն և ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ՝ 10 դ. թւաբանութիւն, 2 դ. հայոց պատմ., 6 դ. նկարչութիւն և 6 դ. երգեցողութիւն։ Վերջինս պիտի պատրաստէ քառաձայն երգեցիկ խումբ։ Իւրաքանչիւրին 700 ր. ռոճիկ. ճանապարհածախս, բնակարան և վառելիք մտնում են ռոճկի մէջ։ Խնդիրների հետ պէտք է ուղարկել աւարտման և ծառայութեան վկայականները։

Դիմել՝ Мервъ (Закаспійскій край). Ишхану Теръ-Погосову. 3—3

ВѢСТНИКЪ ЕВРОПЫ

Ежемѣсячный журналъ исторіи политики, литературы издаваемый М. М. Ковалевскимъ, подъ редакціей К. К. Арсеньева при ближавшемъ участіи: И. В. Жилкина, М. М. Ковалевскаго, Н. А. Котляревскаго В. Д. Кузьминъ-Караваева, А. С. Посникова, Л. З. Слонимскаго К. А. Тимирязева.

Вышла книга за августъ, съ геліогравюрой Л. Н. Толстаго.

Подписная цѣна съ пересылкой и доставкой: на годъ—17 руб. отдѣльная книга —1 р. 50 к. Адресъ канторы редакціи С.-Петербургъ, Василь. островъ, 5 л., 28. (մմ. 25)

ԹՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՒ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Մօսկվայի քաղաքային դպրոցների ուսուցիչների
Փոխադրեց և յարմարեցրեց հայոց դպրոցների ծրագիրներին
ԱՐՇԱԿ ՍՊԱՐԱՊԵՏԵԱՆ

Առաջին տարի		գինն է 12 կ.
Ա. պրակ (I և II տարի միասին) չորրորդ հրատարակած տպագ.		25 կ.
Բ. պրակ (III տարի) երրորդ տպագրութիւն		30 կ.
Գ. պրակ (IV տարի) երկրորդ տպագրութիւն		30 կ.
Դ. պրակ (V տարի)	Ըստ Շապօշնիկօվի և Վալցօվի	40 կ.
Ե. պրակ (VI տարի)		50 կ.
Ձեռնարկ թւաբանութեան		50 կ.

Սոյն բոլոր ժողովածները ընդունված և գործադրվում են մեր գրեթէ բոլոր միջնակարգ հոգևոր և ծխական դպրոցներում։

Գումարով գնողներին 20% զեղչ։

Պատրաստվում է տպագրութեան համար. «Թւաբանութեան դասաւանդումն Ա. և Բ. տարում—մեթօդական ցուցմունքներ ուսուցիչների համար»։

Դիմել Թիֆլիսի «ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ» գրախանութին (Тифлисъ, книж. магазинъ „ГУТТЕНБЕРГЪ“). կամ փոխադրողին՝ Тифлисъ. Абасъ-Абадская площадь.

(կ. չ. ու.) 829. 10—2



ՆՈՐՈՒԹԻՒՆ!!!

Ծոցի ժամացոյց մշտական օրացոյցով։

Այդ ժամացոյցը ցոյց է տալիս օրը, ամսաթիւը և ամիսը։ Գիշերվայ իւրաքանչիւր 12 ժամին սլաքները աւտոմատիկ կերպով թռիչք են անում և ցոյց են տալիս եկող օրը և ամսաթիւը։ Բացի դրանից, այդ ժամացոյցը «ԱՆԿԵՐ» է, 15 քար. ընթացքով, սև պողպատից, լարվում է 40 ժամը մի անգամ, մետալ. ցիֆերբլատով և ուղիղ ընթացքով։ Գինը միայն 4 ր. 50 կ., 2 հատը 8 ր. 50 կ.։ Ուղարկվում է վերադիր վճարով և առանց կանխավճարի, 6 տարվայ երաշխաւորութեամբ։ Առաքումը 1 հատից մինչև 4 հատը 40 կ. (Սիբիր 75 կ.)։ ՄԵՐ ԽՈՐՀՈՒՐԴՆ Է! էժան ժամացոյցների ետևից մի ընկնէք, այլ բերել տուէք մեզանից այդ ժամացոյցը և դուք մեզանից միշտ շնորհակալ կը մնաք։ Մօդային փոքրիկ շղթաներ իսկական նոր ոսկուց, գեղեցկաշէն բրէլօկով 75 կ. և 1 ր. 50 կ., երկու հատը 2 ր. 50 կ. և 3 ր. 50 կ.։ Խնդրում ենք վերաբերվել մեզ կատարեալ վստահութեամբ, իսկ մենք համարձակվում ենք հաւատացնել ձեզ, որ ամեն ջանք գործ կը դնենք ապագայում ևս արդարացնել մեզ այնքան յաճախ արտայայտված վստահութիւնը և շնորհակալութիւնը։

Հասցէն՝ Штрумфельдъ, Варшава, Св. Креста 48, Отд. 23.

(օգ. 13, 26) (В. 44247) 694. 3—2

Առևտրի եւ արդիւնաբերութեան մինիստր. տնօրինութեան ներքոյ գտնվող

Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ
Առևտրական Գիտութիւնների Կուրսեր

(Թիֆլիս, Միքայէլեան պրօսպ. տուն № 24|4)

Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։ Դասընթացքն աւարտողներին տրվում են ատեստատներ։ Առարկաներն են. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական), 2) Առևտրական թւաբանութիւն, 3) Քաղաքատնտեսութիւն, 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն), 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Թւաբանութիւն համրիչի վրա, 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումը)։ Առարկաներն ուսուցանվում են Արևմտեան Եւրոպայի առևտրական ակադեմիաների ծրագրով։ Ամբողջ տարվայ վճարն է 60 ր.։

Գրելու մեքենայի վրա գրելու դասեր։

→ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ ←

Զբաղմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից ամեն օր ժ. 10—12 և 4—7.

Համառօտ ծրագիրը և կանոնները ձրիաբար տրվում և ուղարկվում են կուրսերի շէնքում։

Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ՝
Տ. ՓԻԼՈՅԵԱՆ

(ե.) 774. 20—5

Ա. ԱԹԱՆԱՍԵԱՆ

ԴԱՍԱԳԻՐՔ
ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՄԱՐԴ, ԿԵՆԴԱՆԻ, ԲՈՅՍ ԵՒ ՀԱՆՔ։

Դասընթացք III, IV և V տարիների։

Երկրորդ բարեփոխված տպագրութիւն՝ հայոց ժողովրդական և քաղաքային դպրոցների համար։ Բազմաթիւ բնապատմական նկարներով։

ԳԻՆՆ Է 70 ԿՈՊԷԿ

Պահեստը՝ Тифлисъ, Книжный магазинъ „Гуттенбергъ“. Ծախվում է նաև «Կենտրօնական» և ուրիշ գրավաճառանոցներում։

(չ. ու. կ.) 802. 5—3

Լոյս տեսաւ
Ղ. ԱՂԱՅԵԱՆԻ, Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ, ՅՈՎ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ և Վ. ՓԱՓԱԶԵԱՆԻ
ընկերակցութեամբ կազմված

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐ

Հատոր Ա.
ՌՈՒՍԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐ

Դասագիրք ազգային և պետական դպրոցների և ընթերցանութեան գիրք ամեն հայի համար։

Խոշոր հատոր, բաղկացած երկէջանի մեծադիր 696 երեսներից

Հատորի մէջ կան հետևեալ հեղինակներից, մեծ մասամբ ամբողջական գրուածքներ.

Ղ. Աղայեան, Յով. Թումանեան, Վ. Փափազեան, Աւ. Իսահակեան, Շիրվանզադէ, Յով. Յովհաննիսեան, Լէօ, Շուշ. Կուրղինեան, Գ. Բաշինջաղեան, Վահ. Միրաքեան, Ատրպետ, Յակ. Յակոբեան, Նար-Դոս, Ա. Ծատուրեան, Աւ. Ահարոնեան, Լ. Մանուէլեան, Մուրացան, Ռ. Պատկանեան, Մ. Նալբանդեան, Րաֆֆի, Ս. Շահազիզ, Պ. Պռօշեան, Խ. Աբովեան և Գ. Սունդուկեան։

Հատորի մէջ կայ իւրաքանչիւր հեղինակի պատկերը և նրա մասին կենսագրական տեղեկութիւններ։ Գրքի վերջում համառօտ բառարան։ Գրքի շապիկը ներկայացնում է բազմագոյն մի նկար։ Տպագրութիւնը մաքուր է և շքեղ։

ՊՕՍՏԻ ԾԱԽՔՈՎ ԳԻՆՆ Է 2 ՌՈՒԲԼԻ 50 ԿՈՊԷԿ

Գումարով գնողներին պահեստում կը լինի 20% զեղչ։ Պահեստն է՝ Тифлисъ. Книжн. магазинъ „ГУТТЕНБЕРГЪ“.

(ա. օ.) 827 5—4

Электропечатня Ав. Мугдусіакопова съ С-ми.
Большая Ванкская № 3.